



OPEN SOCIETY
FOUNDATIONS

ԶԵԿՈՒՅՑ

Բժշկական ծառայության հետ կապված
գորակոչիկների եւ զինծառայողների
մարդու իրավունքների խախտումների
վիճակը

Վանաձոր 2012

Շնորհակալություն ենք հայտնում բժիշկ-փորձագետ Արթուր Մինասյանին
փորձագիտական աջակցություն ցուցաբերելու համար:

Սույն տպագրությունն իրականացվել է Բաց հասարակության հիմնադրամներ – Նյու-
Յորքի ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու
եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն
ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Բովանդակություն

Ներածություն	3
Ուսումնասիրության մեթոդոլոգիան	5
Նախագորակոչային տարիքի անձանց եւ գորակոչիկների առողջական վիճակի գնությունը կարգավորող օրենսդրության եւ դրա կիրառման խնդիրները	5
Զինճառայության ընթացքում ժամկետային զինճառայողներին սրամադրվող բժշկական ճառայությունը կարգավորող օրենսդրության եւ դրա կիրառման խնդիրները	13
Եզրահանգումներ	18
Առաջարկություններ	20
Հավելվածներ	22

Ներածություն

Զորակոչի եւ զինծառայության ընթացքում մարդու իրավունքների խախտումների զգալի մասը պայմանավորված են ոչ պատշաճ բժշկական ծառայության ապահովմամբ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2008-2009 թթ. զորակոչի մոնիթորինգի իրականացման արդյունքում¹ արձանագրվեցին բժշկական զննության հետ կապված զորակոչիկների իրավունքների բազմաթիվ խախտումներ, որոնց լուծման վերաբերյալ մշակվեցին առաջարկություններ եւ ներկայացվեցին ՀՀ պաշտպանության նախարարությանը: Մոնիթորինգի արդյունքները 2010 թ-ի ապրիլի 22-ին ներկայացվեցին ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Հասարակական վերահսկողությունը զինված ուժերի համալրման նկատմամբ» թեմայով ընդլայնված աշխատանքային քննարկմանը, որը լայնորեն լուսաբանվեց ԶԼՄ-ներով:²

Անցած ժամանակաընթացքում զորակոչիկների եւ նրանց հարազատների կողմից շարունակվում են բողոքները եւ մտահոգությունները՝ կապված ոչ պատշաճ բժշկական զննության իրականացման հետ:

Ոչ համալիր բժշկական զննության իրականացման հետեւանքով չբացահայտված առողջական խնդիրները զինծառայության ընթացքում բացասաբար են ազդում զինծառայողների կողմից զինվորական պարտականությունների կատարման վրա, որը հանգեցնում է նրանց՝ մարդու իրավունքների նոր խախտումների:

Բազմաթիվ են մտահոգությունները նաեւ զինծառայության ընթացքում զինծառայողներին ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրման հետ կապված, որոնք, ցավոք, որոշ դեպքերում ավարտվում են մահացությամբ:

Ըստ զինծառայողների եւ նրանց հարազատների հաղորդած տվյալների՝ ոչ շարային կամ սահմանափակումներով ծառայությանը պիտանի ճանաչված զինծառայողները ընդգրկվում են շարային ծառայության մեջ, որը հանգեցնում է մարդու իրավունքների նոր խախտումների:

Մտահոգիչ են առողջական վիճակի պատճառով զինծառայությունից վաղաժամկետ ազատման դեպքերը եւ դրանց պատճառների բացահայտման ուղղությամբ ոչ լիարժեք քննության իրականացումը: Պետությունը ոչ միայն

¹ [http://hcav.am/attachments_/5f854_zekeyc_zorakoch_2008\[1\].pdf](http://hcav.am/attachments_/5f854_zekeyc_zorakoch_2008[1].pdf)

http://www.hcav.am/attachments_/2df5c_zorakochi_zekeyc.pdf

² http://www.hcav.am/attachments_/2df5c_zorakochi_zekeyc.pdf

http://parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=22&month=04&year=2010&NewsID=3893&lang=arm

համարժեք փոխհատուցում չի տրամադրում վաղաժամկետ գորացրված զինծառայողին առողջական կորստի դեպքում, այլև համարժեք միջոցներ չի տրամադրում նրա հետագա բուժման համար:

Կազմակերպության եւ զինծառայողների հարազատների կողմից գորակոչիկների եւ զինծառայողների առողջական վիճակի վերաբերյալ հարցումների հիման վրա պաշտպանական գերատեսչությունը իրականացնում է կրկնակի բուժզննություն, սակայն վերստին գտնում է, որ գորակոչիկի եւ զինծառայողի առողջական վիճակը բավարար է զինծառայություն իրականացնելու համար: Չնայած կրկնակի բուժզննությունների իրականացմանը՝ գորակոչիկների եւ զինծառայողների առողջական վիճակի վերաբերյալ մտահոգությունները մնում են չփարատված:

Հարկ է ընդգծել, որ, եթե ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է գորակոչիկի պարտադիր բուժզննության իրականացումը զինվորական ծառայությանը նրա պիտանիության հարցի որոշման համար, ապա գորացրումից առաջ նման պարտադիր բուժզննության իրականացում օրենսդրությունը չի նախատեսում:

Պաշտպանական գերատեսչության կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերը մատչելի չեն գորակոչիկներին, զինծառայողներին եւ նրանց հարազատներին, հետեւաբար կանխատեսելի եւ հասկանալի չեն կարող լինել դրանց հիման վրա պաշտպանական գերատեսչության եւ նրա կառուցվածքային ստորաբաժանումների որոշումները: Նման իրավիճակում մեծանում է ենթաօրենսդրական նորմերի ոչ միատեսակ կիրառման հավանականությունը եւ դրանց արդյունավետ բողոքարկման հնարավորությունը:

2010-2012 թթ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած թվով 32 գորակոչիկների, զինծառայողների եւ նրանց հարազատների կողմից ներկայացված խնդիրների զգալի մասը կապված էր բուժզննության եւ բժշկական ծառայության հետ:

2011 թ-ին առողջական խնդիրների հետ կապված հարցերով դիմած երեք գորակոչիկներից երկուսը եւ վեց զինծառայողներից մեկը ազատվել են զինծառայությունից: 2012 թ-ին կազմակերպություն դիմած 5 գորակոչիկից մեկ եւ վեց զինծառայողից մեկ հոգի ազատվել է զինծառայությունից:

Պետք է նշել, որ քաղաքացիների մոտ առկա է մտավախություն, որ պաշտպանական գերատեսչության հետ կապված հարցերում բողոքների դեպքում կարող են լրացուցիչ բարդություններ առաջանալ:

Սույն զեկույցում ներկայացվում են գորակոչի կազմակերպման եւ զինծառայության ընթացքում բժշկական զննությունը եւ բժշկական ծառայության տրամադրումը կարգավորող օրենսդրությամբ եւ դրա կիրառմամբ

պայմանավորված գորակոչիկների եւ զինծառայողների մարդու իրավունքների խախտումների վիճակի նկարագրությունը:

1. Ուսումնասիրության մեթոդոլոգիան

2010 թ-ից ի վեր ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից զինծառայողների եւ գորակոչիկների մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում բացահայտվել են բազմաթիվ խախտումներ, որոնք պայմանավորված են ոչ պատշաճ բժշկական ծառայության հետ:

Սույն ուսումնասիրության համար տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր են հանդիսացել ՋԼՄ-ներում հրապարակված տեղեկությունները, զինծառայողների, գորակոչիկների եւ նրանց հարազատների կողմից տրամադրված տեղեկատվությունը, պաշտպանական գերատեսչությանը կազմակերպության կողմից հասցեագրված հարցումների պատասխանները, զինծառայողների, գորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը եւ մահվան վկայագրերը: Ստացված տվյալները համեմատվել են ծնողների կողմից տրամադրված տեղեկությունների հետ: Վեր են լուծվել գորակոչիկների եւ զինծառայողների բուժզննության եւ բուժօգնության ապահովումը կարգավորող օրենսդրական նորմերը եւ բացահայտվել են թերությունները, որոնք հանգեցնում են նրանց իրավունքների խախտմանը: Բացի այդ ներառվել են նաեւ ՀՔԱ Վանաձորի կողմից 2008-2009 թթ. իրականացված գորակոչի մոնիթորինգի որոշ տվյալներ:

Առանձին դեպքերի նկարագրությունը ներկայացվում է Հավելված 1-ում:

2. Նախագորակոչային տարիքի անձանց եւ գորակոչիկների առողջական վիճակի զննությունը կարգավորող օրենսդրության եւ դրա կիրառման խնդիրները

Զորակոչիկների առողջական վիճակի զննությունը կարգավորող իրավական նորմերը սահմանված են.

- «Զինպարտության մասին» ՀՀ օրենքով³
- «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով⁴
- ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թ-ի 175-Ն հրամանով⁵ (այսուհետ` Հրաման)

³ <http://www.arlis.am/>

⁴ Տե՛ս նույն աղբյուրը

⁵ Տե՛ս նույն աղբյուրը

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքը սահմանում է բժշկական զննության անցկացումը կարգավորող նորմերը:

ՀՀ «Պաշտպանության մասին» օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված ՀՀ պաշտպանության նախարարությունը հաստատում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչի եւ վարժական հավաքների անցկացման, զինապարտների բժշկական եւ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգերը:

Հրամանով սահմանվում են ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն ու նրանց գործունեության կարգը, հիվանդությունների եւ ֆիզիկական թերությունների ցանկը, որոնց հիման վրա որոշվում է.

- կցագրման, գորակոչի, վարժական հավաքների, հրամանատարաշտաբային վարժանքների և գորախաղերի ժամանակ զինվորական ծառայության քաղաքացիների պիտանիության աստիճանը՝ նկատի ունենալով նրանց առողջական վիճակը և ֆիզիկական զարգացման տվյալները,
- զինծառայողների, ինչպես նաև ՀՀ սահմանների պաշտպանությանը մասնակցած անձանց մոտ ի հայտ եկած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների ու ՀՀ սահմանների պաշտպանության, զինվորական պարտականությունների կատարման կամ զինվորական ծառայության, ինչպես նաև նրանց մահվան պատճառահետևանքային կապը եւ այլն:

Համաձայն Հրամանով սահմանված կարգի՝ բժշկական փորձաքննությունից առաջ կատարվում են գորակոչային տեղամասերին կցագրվող և պարտադիր զինվորական ծառայության գորակոչվող քաղաքացիների բուժզննության հետեւյալ տեսակները, որոնք ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

#	Պարտադիր հետազոտություններ	Փաստացի իրականացման մասին
1.	մարդաչափություն	կատարվում է
2.	ուժաչափություն	չի նշվել
3.	կրծքավանդակի օրգանների ռենտգենաբանական (ֆլյուորոգրաֆիկ) հետազոտություն	նշվել է ռենտգեն կամ թոքերի զննության մասին
4.	որովայնի օրգանների սոնոգրաֆիա	նշվում է սոնոգրաֆիա
5.	ԷՍԳ	կատարվում է
6.	արտաքին շնչառական ֆունկցիայի որոշում	չի նշվել
7.	արյան (հեմոգլոբին, լեյկոցիտներ, ԷՆԱ, արյան խումբ և ռեզուս-գործոն, ՄՌՊ) անալիզ	նշվում է արյան անալիզ
8.	մեզի անալիզներ	չի նշվել

9.	կանխարգելիչ պատվաստումներ՝ ըստ օրացուցային պլանի կամ բժշկական ցուցումների	չի նշվել
10.	այլ հետազոտություններ	նշվել է նյարդային համակարգի, տեսողության, լսողության, ատամների, ձեռքերի, քիթ-կոկորդի, մաշկի զննություն, ճնշման չափում

2008 թ-ից սկսած կազմակերպության մշտադիտարկումները ցույց են տալիս, որ չեն իրականացվում Հրամանով սահմանված բոլոր բժշկական հետազոտությունները՝ անկախ գորակոչիկների գանգատներից: Ջորակոչիկի բուժզննությունը ախտորոշում է տվյալ պահին նրա առողջական վիճակը, սակայն չի ներառում որեւէ կանխատեսում զինձառայության ընթացքում ներկա առողջական վիճակի հետ կապված հնարավոր ռիսկերը, չի գնահատում զինձառայությանը բնորոշ ծանրաբեռնվածության պայմաններում առողջական վիճակի հնարավոր փոփոխությունները:

Առողջական վիճակի ոչ պատշաճ զննության, այդ թվում՝ նշված կանխատեսումների բացակայության հետեւանքով անհրաժեշտություն է առաջանում կամ զինձառայողին վաղաժամկետ գորացրելու, կամ լրացուցիչ ծախսեր կատարելու՝ զինձառայության ընթացքում առողջական խնդիրների լուծման համար: Ի դեպ, առողջական խնդիրների հետեւանքով գորացրվածները հանդիպում են լուրջ խոչընդոտների թե՛ գորացրման փաստաթղթերի ստացման, թե՛ հետագա բուժման հետ կապված հարցերում: Նման դեպքերից է կազմակերպության կողմից ուսումնասիրված Դ. Ա-ի, Ս. Մ-ի եւ Ա. Մ-ի դեպքերը (տե՛ս Հավելված 1-ում ներկայացված դեպքերի նկարագրությունը):

Հրամանով, ելնելով առողջական վիճակից, սահմանվում են զինձառայության պիտանիության հետեւյալ տեսակները՝ շարային, ոչ շարային, շարային՝ սահմանափակումներով, որոնց կարգավորող իրավական ակտը մատչելի չէ գորակոչիկներին, նրանց հարազատներին եւ հանրությանը: Ըստ Հրամանի՝ ոչ շարային ծառայության համար շարքային կազմի պարտադիր զինձառայողների զինվորական ծառայության պիտանիությունը որոշվում է շարային ծառայության հետ նրանց առողջական վիճակի համատեղելիության գնահատման հիման վրա: Շարքային կազմի պարտադիր զինձառայողը ճանաչվում է պիտանի ոչ շարային կամ շարային՝ սահմանափակումներով ծառայությանը՝ հաշվի առնելով հիվանդության բնույթը կամ ֆիզիկական վիճակը, ինչպես նաև ծառայության բնույթը: Նման դեպքում Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի (ԿՌԲՀ) որոշման մեջ նշվում է, թե ծառայության որ պայմաններն են տվյալ անձին հակացուցված (օրինակ՝ ֆիզիկական մեծ լարվածություն պահանջող աշխատանքներ, ցրտի կամ խոնավության երկարատև ազդեցություն, գիշերային

հերթապահություն, հաճախակի և երկարատև գործուղումներ, շարժվող մեխանիզմների, կրակի կամ ջրի հետ աշխատանք և այլն): Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ շարային կամ շարային՝ սահմանափակումներով ծառայության համար պիտանի ճանաչված զորակոչիկները ներգրավվում են շարային ծառայության մեջ եւ հաշվի չեն առնվում ԿՌԲՀ-ի ցուցումները: Մասնավորապես, նրանք ծառայություն են իրականացնում մարտական դիրքերում եւ վերակարգում, անցնում են շարային պատրաստություն, որի հետեւանքով վատթարանում է նրանց առողջական վիճակը (տե՛ս Հավելված 1-ում ներկայացված մասնավորապես Մ. Դ-ի, Է. Կ-ի դեպքերի նկարագրությունը):

2011 թ-ի հոկտեմբերի 10-ին կազմակերպությունը տեղեկատվության հարցմամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ պարզելու համար, թե որոնք են շարային՝ սահմանափակումներով ծառայության, ոչ շարային ծառայության պարտականությունների ցանկը եւ դրանց կարգավորման վերաբերյալ համապատասխան իրավական նորմերը: Ի պատասխան նշված հարցմանը՝ ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավարը 2011 թ-ի նոյեմբերի 21-ին հայտնել է, որ ՀՀ ՊՆ համակարգում ներկայումս գործում է զորամասում ոչ շարային ծառայության հասկացության կիրառումը եւ մշակված է դրա կարգը: Մակայն զորամասերում ոչ շարային ծառայության կարգի տրամադրման վերաբերյալ կազմակերպության 2011 թ-ի դեկտեմբերի 9-ի հարցմանը ՀՀ պաշտպանության նախարարությունը չի պատասխանել եւ այն չի տրամադրել:

2012 թ-ի մարտի 2-ին կազմակերպությունը վերստին դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ նույն պահանջով: Պաշտպանական գերատեսչությունն իր 2012 թ-ի մայիսի 29-ի նամակով հայտնում է, որ կարգը չի կարող տրամադրվել այն պատճառաբանությամբ, որ ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թ-ի 175-Ն հրամանով հաստատված «Զինապարտների բժշկական եւ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը» վերամշակման ընթացքում է եւ կտրամադրվի միայն այն հաստատելուց հետո (տե՛ս կից գրությունները եւ դրանց պատասխանները Հավելված 2.1-2.5-ում):

Ասպիտով, պաշտպանական գերատեսչությունը մի դեպքում հայտնում է կարգի առկայության, մյուս դեպքում՝ այդ կարգի վերամշակման մասին, եւ միաժամանակ իրականացնում է ոչ շարային եւ շարային՝ սահմանափակումներով զինծառայության կազմակերպումը:

Այսինքն՝ ոչ շարային եւ շարային՝ սահմանափակումներով զինծառայության կարգավորման վերաբերյալ իրավական ակտը մատչելի չէ զորակոչիկներին, զինծառայողներին եւ նրանց հարազատներին եւ դրանց իրականացումը հասկանալի չէ նրանց, եւ հայտնի չէ դրանց հետ կապված բողոքների եւ դիմումների քննման իրավական ընթացակարգը:

Կազմակերպությունն ուսումնասիրել է ՀՀ պաշտպանության նախարարի՝ «Զինապարտների բժշկական եվ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը հաստատելու մասին» 2006 թ-ի 378 եւ 2010 թ-ի 175 հրամանները՝ նպատակ ունենալով բացահայտել փոփոխությունները, որոնք վերաբերում են հիվանդությունների բովանդակությանը եւ դրանց համապատասխան՝ պիտանիության տեսակներին:

ՀՀ պաշտպանության նախարարի 2006 թ-ի 378 եւ 2010 թ-ի 175 հրամանների ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ 2006 թ-ի կարգի համեմատ 2010 թ-ի կարգում ընդգրկված որոշ նույն հիվանդությունների համար փոխվել է պիտանիության աստիճանը, որոշ հիվանդություններ ընդհանրապես հանվել են ցանկից: Այս առնչությամբ կազմակերպությունը 2011 թ-ի հոկտեմբերի 10-ին պարզաբանում է խնդրել ՀՀ պաշտպանության նախարարությունից, եւ 2011 թ-ի նոյեմբերի 21-ին պատասխան է տրվել հիվանդությունների ցանկում կատարված փոփոխությունների մասին միայն մի մասով: 2011 թ-ի դեկտեմբերի 9-ին մեր կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանը լրացուցիչ պարզաբանում տրամադրելուց հետո, 2012 թ-ի մայիսի 29-ին ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավարը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարի 175 հրամանով հաստատված «Զինապարտների բժշկական եւ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը» ներկա պահին գտնվում է վերանայման փուլում: Սակայն հարկ է նշել, որ այն ներկայումս կիրառվում է, թեև գտնվում է վերանայման փուլում (տե՛ս կից գրությունները Հավելված 2.1-2.5-ում եւ ՀՀ պաշտպանության նախարարի 2006 թ-ի 378 եւ 2010 թ-ի 175 հրամաններով սահմանված հիվանդությունների ցանկում կատարված փոփոխությունները Հավելված 3-ում):

Այսպիսով, առողջական վիճակի զննության իրականացման կարգում սահմանված հիվանդությունների ցանկի փոփոխությունները հասկանալի չեն եւ բովանդակային, եւ հիմնավորման տեսանկյունից, ինչը իրավական պետությանը բնորոշ իրավական կանխատեսելիության սկզբունքի կոպիտ ոտնահարում է:

Հրամանով սահմանված առանձին հիվանդությունների բնութագրերը/հատկանիշները, որոնց հիման վրա զինապարտին տրվում է տարկետում, նույնպես հստակ ձեւակերպված չեն:

Բժշկական եզրակացությունների նկատմամբ գորակոչիկների եւ նրանց հարազատների անվստահությունը պայմանավորված է նաեւ դրանցում գրառված ձեւակերպումների անհստակությամբ եւ ոչ միանշանակությամբ:

Առողջական խնդիրների հետ կապված իրավունքների պաշտպանության հարցով կազմակերպությանը դիմած գորակոչիկների գործերի ուսումնասիրության ընթացքում բացահայտվեց եւս մեկ խնդիր: Հրամանով սահմանված պիտանիության տեսակը որոշվում են մեկ հիվանդության առկայության հիման վրա, սակայն գորակոչիկը կարող է ունենալ մի քանի հիվանդություն, որոնցից որեւէ մեկով չի

նախատեսում տարկետման կամ ազատման տրամադրում եւ կարող է ճանաչվել պիտանի ոչ շարային ծառայության համար: Մինչդեռ, մի քանի հիվանդությունների առկայության պարագայում զինծառայողը չի կարող լիարժեք իրականացնել զինվորական պարտականությունները:

Այսպիսով, պաշտպանության նախարարի հրամանով չեն կարգավորվում զորակոչիկի կամ զինծառայողի մոտ մի քանի հիվանդության առկայության դեպքում նրանց՝ զինծառայության պիտանիության, զինծառայությունից տարկետման տրամադրման եւ ազատման հարցերը:

Համաձայն Հրամանի 2-րդ գլխի 12-րդ կետի՝ զորակոչիկների եւ զինծառայողների առողջական վիճակի փորձաքննությունը իրականացնում եւ առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունները տրամադրում են.

1. *ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը, որը հաստիքային մարմին է, եւ նախագահին, եւ մասնագետներին նշանակում է ՀՀ պաշտպանության նախարարը՝ իր հրամանով: ԿՌԲՀ-ն համալրվում է թերապևտ, վիրաբույժ, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, քիթ-կոկորդ-ականջ և մաշկավեներոլոգ բժիշկ-մասնագետներով,*
2. *հոսպիտալային ռազմաբժշկական հանձնաժողովը, որն արտահաստիքային մարմին է եւ ՀՌԲՀ-ն կազմավորվում է հոսպիտալի պետի հրամանով՝ ՀՀ ԶՈՒ ՌԲՎ պետի և ԿՌԲՀ-ի նախագահի համաձայնությամբ: Որպես կանոն, ՀՌԲՀ-ի նախագահ նշանակվում է հոսպիտալի պետի բուժօժով տեղակալը, իսկ անդամներ՝ առաջատար մասնագետները և առաջատար բաժանմունքների պետերը,*
3. *հոսպիտալային ռազմաբժշկաօդաչուական հանձնաժողովը, որն արտահաստիքային մարմին է եւ կազմավորվում է հոսպիտալի պետի հրամանով՝ ՀՀ ԶՈՒ ՌԲՎ պետի և ԿՌԲՀ-ի նախագահի համաձայնությամբ, ունի հետևյալ կազմը՝ նախագահ, առնվազն 4 բժիշկ-անդամներ և քարտուղար: Որպես կանոն, հանձնաժողովի նախագահ է նշանակվում ռազմաօդաչուական բաժանմունքի պետը: ՀՌԲՕՀ-ի որոշումները քննարկում, վերանայում և հաստատում է ԿՌԲՀ-ն,*
4. *կենտրոնական պոլիկլինիկայի ռազմաբժշկական հանձնաժողովը արտահաստիքային մարմին է, որի ընդունած որոշումները հաստատում կամ այլ որոշում է ընդունում ԿՌԲՀ-ն: Կազմավորվում է ՀՀ ԶՈՒ ՌԲՎ պետի հրամանով՝ ԿՌԲՀ-ի նախագահի համաձայնությամբ և կենտրոնական պոլիկլինիկայի պետի ներկայացմամբ, ունի հետևյալ կազմը՝ նախագահ, քարտուղար և առնվազն 2 բժիշկ-անդամներ: ԿՊ ՌԲՀ-ի նախագահ կարող են նշանակվել պոլիկլինիկայի պետը կամ նրա տեղակալը, անդամներ՝ ԿՊ բաժնի պետերից,*
5. *հանրապետական հավաքակայանի ռազմաբժշկական հանձնաժողով /ՀՀ ՌԲՀ/, որը կազմավորվում է զորակոչի ժամանակ, ՀՀ ԶՈՒ ՌԲՎ պետի հրամանով, ունի*

հետևյալ կազմը՝ նախագահ (ռազմաբժշկական փորձաքննության վերաբերյալ գիտելիքներ և փորձ ունեցող բժիշկ-սպա), թերապևտ, վիրաբույժ, նյարդաբան, հոգեբույժ, ատամնաբույժ, ակնաբույժ, մաշկաբան, ռենտգենոլոգ, ֆթիզիատր, սեռաբան, ինչպես նաև բուժքույրեր և ռենտգեն-տեխնիկներ (զինվորական բուժհիմնարկներից),

6. Ռազմաուսումնական հաստատությունների /ՌՌԻՀ/ ընդունելության *ռազմաբժշկական հանձնաժողովը* արտահաստիքային մարմին է եւ գործում է Ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության ընդունելության ժամանակ, կազմավորվում է՝ հիմք ընդունելով ՌՌԻՀ-երի ընդունելությունը կազմակերպելու և անցկացնելու վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանը, ՀՀ ՁՌԻ ՌԲՎ պետի հրամանով, հետևյալ կազմով. նախագահ (ՀՀ ՁՌԻ ՌԲՎ մասնագետ), անդամներ՝ թերապևտ, վիրաբույժ, վնասվածքաբան, ատամնաբույժ, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, մաշկաբան, ինչպես նաև բուժքույրեր և ռենտգեն-տեխնիկներ (զինվորական բուժհիմնարկներից),
7. *կենտրոնական բժշկական հանձնաժողովը* արտահաստիքային մարմին է եւ գործում է զորակոչի ժամանակ, կազմավորվում է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված անհատական կազմով: Որպես կանոն, հանձնաժողովի նախագահ է նշանակվում ՀՀ զինվորական կոմիսարը, անդամներ՝ թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, մաշկաբան և ու քարտուղար: ԿԲՀ-ն բժշկական փորձաքննության ղեկավար մարմին է և հաշվետու է հանրապետական զորակոչային հանձնաժողովի նախագահին),
8. *զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովները* արտահաստիքային մարմիններ են եւ գործում են կցազրման և զորակոչի ժամանակ, կազմավորվում են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի համաձայն: ՁԲՀ-ների կազմում ընդգրկվում են թերապևտ, վիրաբույժ, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, ստոմատոլոգ, մաշկաբան և բուժքույր: ՁԲՀ-ների մասնագետ-բժիշկների կազմից տարածքային զորակոչային հանձնաժողովի նախագահը նշանակում է ավագ բժիշկ, որը որպես փորձագետ ընդգրկվում է զորակոչային հանձնաժողովի կազմում:

Գործնականում, մասնագետները ներգրավվում են քաղաքացիական բուժհաստատություններից: Առանձին մասնագետների հետ զրույցները ցույց են տալիս, որ բժշկական հանձնաժողովի կողմից որոշումներում նրանց դերը ստորադասվում է հանձնաժողովի նախագահի որոշմանը: Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման, որոշումների ընդունման կարգի բացակայության պայմաններում մեծանում է հանձնաժողովի նախագահի սուբյեկտիվ մոտեցումը որոշումների կայացման մեջ: Հաշվի առնելով, որ նախագահները ռազմական ներկայացուցիչներ են, զորակոչիկների զինվորական ծառայության պիտանիության հարցում նվազում է օբյեկտիվությունը:

Հրամանի 3-րդ գլխի 39-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ բուժհիմնարկում հետազոտության ավարտից հետո լրացվում է գորակոչիկի առողջական վիճակի հետազոտման ակտը, որը ստորագրվում է տվյալ բուժհիմնարկում ՀՀ առողջապահության նախարարության հրամանով կազմած փորձաքննական հանձնաժողովի անդամների կողմից և հաստատվում բուժհիմնարկի կնիքով: Ակտը ներկայացվում է զինկոմիսարիատ, որի հիման վրա եզրակացություն է տրվում գորակոչիկի պիտանիության մասին:

Հրամանով հաստատված կարգի որեւէ կետով չի նշվում, որ գորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ բժշկական եզրակացության ակտը պետք է պարտադիր տրամադրվի գորակոչիկին: Ըստ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների մեկնաբանությունների՝ դրանք կարող են տրամադրվել գորակոչիկի կամ նրա հարազատի դիմումի հիման վրա: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ բժշկական եզրակացությունները գորակոչիկներին չեն տրամադրվում նույնիսկ վերջիններիս դիմելու դեպքում:

Նման պայմաններում, երբ գորակոչիկը համաձայն չի լինում բժշկական եզրակացության հետ, ապա այն բողոքարկելու ճանապարհին հանդիպում է խոչընդոտների: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրության 27-րդ և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածների համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկատվությունը՝ այն ստանալու նպատակով: Այսինքն՝ Հրամանով չի ապահովվում Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված գորակոչիկների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Չնայած գորակոչային հանձնաժողովի որոշման վերաբերյալ գորակոչիկի կամ նրա հարազատների բողոքին, գորակոչիկը ուղարկվում է ծառայության՝ բողոքի քննարկման ընթացքում: Այսինքն՝ չի կասեցվում զինվորական ծառայությանը պիտանի ճանաչելու վերաբերյալ որոշման կատարումը՝ մինչև դրա բողոքարկման արդյունքների ստացումը: Նման դեպքերում հնարավոր է զինծառայության ընթացքում առողջական վիճակի վատթարացում, որը չէր կանխատեսել բժշկական հանձնաժողովը:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածով⁶ նախատեսվում է բողոքարկվող վարչական ակտի կատարման կասեցում վարչական բողոքի բերելու դեպքում: Նույն հոդվածով սահմանվում են բացառությունները, երբ վարչական ակտը պետք է անհապաղ կատարվի՝ անկախ նրա վերաբերյալ բողոքի առկայությունից: Նշված հոդվածը առնչվում է հանրային գերակա շահի եւ անձի իրավունքների պաշտպանության հարաբերությանը:

Զինծառայությանը պիտանիության վերաբերյալ որոշման բողոքարկումը կարող է, իհարկե, չարաշահվել զինծառայությունից խուսափելու նպատակով, սակայն մյուս կողմից, պիտանիության վերաբերյալ որոշման չկասեցնելը կարող է

⁶ <http://www.arlis.am/>

հանգեցնել անձի իրավունքների խախտմանը: Նշված հոդվածի կիրառման ապահովման տեսակետից կարելու է պաշտպանական գերատեսչության կողմից համապատասխան իրավական հստակ ընթացակարգի սահմանումը:

3. Զինձառայության ընթացքում ժամկետային զինձառայողներին տրամադրվող բժշկական ծառայությունը կարգավորող օրենսդրության եւ դրա կիրառման խնդիրները

Զինձառայության ընթացքում զինձառայողների մոտ առողջական խնդիրների առաջացման և առկա առողջական խնդիրների խորացման հիմնական պատճառներ են հանդիսանում.

- գորակոչի ընթացքում ոչ լիարժեք բժշկական զննության հետեւանքով չբացահայտված առողջական խնդիրները,
- ոչ շարային կամ շարային՝ սահմանափակումներով ծառայության համար պիտանի ճանաչված զինձառայողների ներգրավումը շարային ծառայության մեջ,
- ծառայության ընթացքում կամ ծառայության հետեւանքով առաջացած առողջական խնդիրների նկատմամբ ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրումը,
- բուժձառայության կողմից զինձառայողների ծառայության ընթացքի անբավարար վերահսկողությունը, բուժկանխարգելիչ անբավարար միջոցառումները (սննդի, ջրի որակին վերաբերող, գերծանրաբեռնվածության, գերհոգնածության, հիվանդության առաջացմանը հանգեցնող երևույթների բացառումը և այլն
- դեղորայքի ու անհրաժեշտ սարքավորումների անբավարարությունը, հատկապես՝ բուժձառայության գորամասային օղակում
- բուժձառայության օղակների՝ առաջին օգնությունից մինչև մասնագիտացված բժշկական օգնություն, ոչ բավարար արդյունավետ փոխարաբերությունն ու կապը, բուժձառայության համակարգի անկատարությունը
- բուժանձնակազմի մասնագիտական կարողությունների անբավարար մակարդակը:

Զինձառայության ընթացքում զինձառայողի մոտ բացահայտվում է այնպիսի հիվանդություն, որը գորակոչի ընթացքում բժշկական հանձնաժողովի կողմից չէր կարող չարձանագրվել: Նման դեպքերի վերաբերյալ Հրամանի 3-րդ գլխի 49-րդ կետի համաձայն՝ ըստ առողջական վիճակի ոչ ճիշտ գորակոչված և առաջին 3 ամիսների ընթացքում գորացրված յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ ԿՌԲՀ-ն զեկուցում է վերադաս հրամանատարությանը, իսկ հանրապետական զինկոմիսարիատը ՀՀ առողջապահության նախարարության և ԿՌԲՀ-ի հետ համատեղ փաստի

կապակցությամբ իրականացնում է ծառայողական քննություն: Սակայն ծառայողական քննության նյութերը եւ եզրակացությունը, որոնք էական նշանակություն ունեն զինծառայողի իրավունքների պաշտպանության համար, չեն տրամադրվում վերջինիս:

Այսինքն՝ զինծառայողը զրկված է առողջական խնդիրների հետեւանքով իր խախտված իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը (հաստատված է Ազգային ժողովի 1996 թվականի դեկտեմբերի 3-ի օրենքով) սահմանում է զինված ուժերում զինծառայության ընթացքում զինծառայողներին բժշկական ծառայության տրամադրման հետ կապված գնդի բժշկական պետի, բուժկետի հերթապահ բժշկի պարտականությունները, մասնավորապես.

- անձնակազմի բժշկական քննության կազմակերպում
- ամբուլատոր ընդունելությանը մասնակցություն
- գնդի բուժկետում գտնվող և բուժական հիմնարկներ ուղարկվող հիվանդների հետազոտում
- գնդի բուժկետում տեղավորված հիվանդների վիճակը մասին տեղեկացվածություն և նրանց բուժման վերահսկողություն
- այլ բուժհիմնարկներում տեղավորված հիվանդների վիճակի մասին տեղեկացվածություն եւ նրանց պարբերական այցելություն
- քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց նկատմամբ մշտական բժշկական հսկողության սահմանում
- քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց առողջության ամրապնդման վերաբերյալ հանձնարարականների հաղորդում ստորաբաժանումների հրամանատարներին և դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն
- ստորաբաժանումների հրամանատարների և անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով նրանց տեղակալների, գնդի զինվորական հոգեբանի հետ համատեղ ֆիզիկական ու հոգևոր զարգացման շեղումներ և ալկոհոլամոլության, թունամոլության ու թմրամոլության հակում ունեցող զինծառայողներին ի հայտ բերում, նրանց բուժման համար միջոցների ձեռնարկում:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը կարգավորում է բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացումը, զինծառայողների բուժզննումների իրականացումը, շարքային կազմի պարտադիր զինծառայողների բժշկական քննության իրականացումը: Կանոնագրքով նախատեսված է շարքային կազմի պարտադիր զինծառայողների տարեկան 2 անգամ պլանային բժշկական զննության անցկացում՝ ուսուցման ձմեռային եւ ամառային փուլերից առաջ:

Սակայն չի նշվում, թե ինչ ծավալի բժշկական հետազոտություններ պետք է անցկացվեն՝ միաժամանակ նշելով, որ խորացված բժշկական զննության կարող են ենթարկվել՝ ելնելով միայն առողջական վիճակի վերաբերյալ գանգատներից:

Հարկ է ընդգծել, որ զինվորական ծառայության ընթացքում զինվորական պարտականությունների իրականացման հետեւանքով առաջացած առողջական խնդիրների դեպքում զինծառայողների պիտանիության վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է ԿՌԲՀ նախագահի կողմից: Քանի որ այդ հանձնաժողովի նախագահը պաշտպանական գերատեսչության ներկայացուցիչ է եւ ենթարկվում է պաշտպանության նախարարությանը, ապա հանձնաժողովի որոշումների ընդունման կարգի բացակայության պարագայում էական է դառնում հանձնաժողովի նախագահի սուբյեկտիվ դերը վերջնական որոշման կայացման մեջ, որի հետեւանքով մեծանում է զինծառայողների եւ նրանց հարազատների անվստահությունը այդ որոշումների նկատմամբ:

Կանոնագրքի հոդված 80-ի համաձայն՝ հրամանատարը պարտավոր է միջոցներ ձեռնարկել.

- զինծառայողների առողջության պահպանման և ամրապնդման ուղղությամբ
- անձնակազմի բժշկական ապահովման կատարելագործման ուղղությամբ
- հոգեկան խանգարում ունեցող զինծառայողներին հոգեբուժական զննման ուղարկման, իսկ անհրաժեշտության դեպքում, բժշկի եզրակացությամբ՝ բուժման:

Ըստ ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի՝ ժամկետային պարտադիր զինծառայողներին բժշկական օգնության տրամադրման վերաբերյալ վերջնական որոշումները կայացնում է հրամանատարը: Կանոնագրքով զինծառայողների բողոքների, դիմումների քննարկման վերաբերյալ վերջնական որոշումը նույնպես կայացնում է զորամասի հրամանատարը (Կանոնագրքի հավելված 8):

Այսպիսով՝ միեւնույն անձը որոշում է կայացնում զինծառայողներին բժշկական ծառայության տրամադրման վերաբերյալ եւ միաժամանակ վերջնական որոշում է կայացնում առողջական խնդիրների հետ կապված զինծառայողների բողոքների եւ դիմումների վերաբերյալ: Այսինքն՝ ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը չի նախատեսում զինծառայողների բողոքների եւ դիմումների քննության արդյունավետ եւ անկախ մեխանիզմ: Բացի այդ, բժշկական կրթություն չունեցող զորամասի հրամանատարները մասնագիտական բավարար կարողություններ չունեն բժշկական հարցերով վերջնական որոշումներ կայացնել: Շատ հաճախ զորամասային օղակում բուժօժանդության աշխատակիցներն ու զորամասի հրամանատարը ունենում են կոնֆլիկտներ, որոնք /քանի որ բուժօժանդության

աշխատակիցները ենթակա են գորամասի հրամանատարին/ լուծվում են գորամասի հրամանատարի գերակա դիրքի հետեւանքով զինծառայողներին բուժօգնություն տրամադրելու վերաբերյալ ոչ մասնագիտական որոշումների կայացմամբ:

Զինծառայության ընթացքում մտահոգիչ խնդիրներ են հանդիսանում ոչ պատշաճ բժշկական գննության կամ բժշկական օգնության տրամադրման հետեւանքով զինծառայողների մոտ քրոնիկական հիվանդությունների, խեղումների ի հայտ գալը եւ մինչեւ անգամ մահացությունները /տե՛ս Հավելվածում ներկայացված Հայկ Խաչատրյանի եւ Ս. Ս-ի դեպքերի նկարագրությունը/:

Ո՛չ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, ո՛չ ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնադրքով, ո՛չ էլ պաշտպանության նախարարի հրամանով որեւէ նորմ սահմանված չէ զինծառայության ընթացքում եւ ծառայողական պարտականությունների կատարման հետեւանքով առողջական խնդիրների հիմքով զինծառայողների վաղաժամկետ զորացրման դեպքերի վերաբերյալ պարտադիր ծառայողական քննության անցկացման մասին:

Խոսքը վերաբերում է ոչ միայն զինծառայության հետ անհամատեղելի առողջական խնդիրների առաջացման պատճառների բացահայտմանը, այլեւ առողջական խնդիրների պատճառով զորացրման դեպքերին:

Ի դեպ, զորացումից հետո, քաղաքացուն պատշաճ բարոյական եւ նյութական փոխհատուցում չի տրամադրվում (տե՛ս Հավելված 1-ում ներկայացված Ա. Ս-ի, Ս. Ս-ի եւ Դ. Ա-ի դեպքերի նկարագրությունը):

Բժշկական անձնակազմի կողմից բուժծառայության տրամադրման հետ կապված մտահոգությունների վերաբերյալ առանձին ահազանգերը հիմք են տալիս եզրակացնելու ոչ պատշաճ վերաբերմունքի մասին, որոնց ուղղությամբ դեռեւս համալիր հետազոտություն չի իրականացվել:

Արտառոց էր զինծառայող Աղասի Աբրահամյանի՝ բժիշկների կողմից բռնության ենթարկվելու փաստը: 2011 թվականի օգոստոսի 26-ին Ա. Աբրահամյանը անգիտակից վիճակում շտաբի պետի և 2 զինվորների հետ միասին պատգարակով բերվել է բուժկետ: Այդ պահին բուժկետում գտնվել է հերթապահ բժիշկ Սուրեն Թադևոսյանը: Վերջինս ներարկումներ է կատարել և բուժումներ նշանակել, որից հետո Աղասի Աբրահամյանը գիտակցության է եկել:

Նույն օրը ժամը 10:00-ին զինմասից ինչ-որ մեկը զանգահարել է Աղասի Աբրահամյանին, և վերջինս ինքնուրույն մոտեցել է հեռախոսին և բավականին երկար ժամանակ խոսել: Հեռախոսազրույցն ավարտելուց հետո պառկել է մահճակալին: Նա մահճակալից 3 անգամ ընկել է: 3-րդ անգամ ընկնելուց հետո նրան չեն տեղափոխել մահճակալ, այլ թողել են հատակին, ծածկել են, որպեսզի պառկած մնա:

Ժամը 16:00-ին բուժկետ է ժամանել բուժկետի պետը՝ Վարդգես Պողոսյանը, և տեսնելով Աղասիին պառկած՝ սկսել է ոտքերով հարվածել՝ պատճառաբանելով, որ Ա. Աբրահամյանը «սիմուլյանտություն» է անում եւ զինվորին հորդորել է վեր կենալ, կրկին խփել է ու հրել, իսկ վերջինս զլխով հարվածել է կամ մահճակալին, կամ պատին, որի հետևանքով ուշագնաց է եղել:

Նրան տեղափոխել են Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ, որտեղ էլ մահացել է:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ ապահովված չէ զինձառայողների մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ պետության՝ հանձինս պաշտպանության նախարարության, պոզիտիվ պարտականության իրականացումը:

Զինձառայողի նկատմամբ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի բացահայտման եւ կանխարգելման ուղղությամբ պետության պոզիտիվ պարտականության կատարումը ենթադրում է զորացրումից առաջ զինձառայողի առողջական վիճակի վերաբերյալ համալիր բժշկական զննության իրականացում, որը նույնպես կարգավորված չէ պաշտպանության բնագավառին վերաբերող որեւէ իրավական ակտով:

Ավելին, արձանագրել ենք դեպքեր, երբ առողջական խնդիրների հիմքով զորացրված զինձառայողին զորացրման վերաբերյալ փաստաթղթերը (հրաման, անձնագիր, զինվորական գրքույկ) տրամադրվում են բավականին ուշ, որի հետևանքով զորացրվածները հնարավորություն չեն ունենում լուծելու իրենց առողջապահական, սոցիալական եւ կրթական խնդիրները (տե՛ս Հավելված 1-ում ներկայացված Ա. Մ-ի, Ս. Մ-ի եւ Դ. Ա-ի դեպքի նկարագրությունը):

4. Եզրահանգումներ

Այսպիսով, վերլուծելով նախագորակոչային տարիքի անձանց եւ գորակոչիկների առողջական վիճակի զննությունը կարգավորող օրենսդրության, զինձառայության ընթացքում ժամկետային զինձառայողներին տրամադրվող բժշկական ծառայությունը կարգավորող օրենսդրության եւ դրանց կիրառման վիճակը՝ կարելի է եզրակացնել.

Օրենսդրության վերաբերյալ

1. Բացակայում է գորակոչի կազմակերպման ընթացքում բժշկական զննության եզրակացության ակտի բողոքարկման մեխանիզմը
2. Օրենսդրորեն չի կարգավորվում գորակոչիկի մոտ մի քանի հիվանդության առկայության պարագայում պարտադիր զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ խնդիրը
3. Առողջական վիճակի զննության կարգում սահմանված հիվանդությունների ցանկում փոփոխությունները կանխատեսելի չեն թե՛ բովանդակային, եւ թե՛ հիմնավորման տեսանկյունից
4. ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայողական կանոնագրքով չի նախատեսվում զինձառայողների բողոքների եւ դիմումների քննության անկախ եւ արդյունավետ մեխանիզմ
5. Սահմանված չէ որեւէ նորմ զինձառայության ընթացքում եւ ծառայողական պարտականությունների կատարման հետեւանքով առողջական խնդիրների հիմքով զինձառայողների վաղաժամկետ զորացրման դեպքերի վերաբերյալ պարտադիր ծառայողական քննության անցկացման մասին
6. ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում զորացրումից առաջ անձի առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության իրականացում
7. Պաշտպանության բնագավառի օրենսդրությունը չի նախատեսում զինձառայության ընթացքում առողջական խնդիրների կամ ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրման հետեւանքով մահացության դեպքերի վերաբերյալ ծառայողական քննության իրականացում
8. Վերադաս հրամանատարության՝ բուժձառայության կազմակերպմանը վերաբերող հրամանները երբեմն հակասում են ՀՀ օրենսդրությանը եւ Սահմանադրությանը:

Օրենսդրության կիրառման վերաբերյալ

1. Ձորակոչի ընթացքում չի ապահովվում գորակոչիկների պարտադիր համալիր բժշկական հետազոտության իրականացումը՝ օրենքով նախատեսված ամբողջ ծավալով:
2. Առաջին անգամ տարկետում ստացած գորակոչիկները միեւնոյն հիվանդությունների առկայության դեպքում հաջորդ գորակոչին առանց հիմնավորման գորակոչվում են զինձառայության:
3. Շարային, ոչ շարային եւ շարային՝ սահմանափակումներով ծառայության տեսակները կարգավորող ենթաօրենսդրական ակտը մատչելի չէ գորակոչիկներին, զինձառայողներին, նրանց հարազատներին եւ հասարակությանը
4. Ոչ շարային կամ շարային՝ սահմանափակումներով ծառայության համար պիտանի ճանաչված զինձառայողները ընդգրկվում են շարային ծառայության մեջ:
5. Չի գնահատվում զինձառայությանը բնորոշ ծանրաբեռնվածության պայմաններում առողջական վիճակի հնարավոր զարգացումները:
6. Առողջական խնդիրների հիմքով վաղաժամ գորացրման դեպքում նախկին զինձառայողներին անհարժեշտ փաստաթղթերը տրամադրվում են ուշացումով:
7. Պատշաճ կերպով չեն արձանագրվում ծառայության ընթացքում եւ ծառայության հետեւանքով զինվորների մոտ խեղումները, որի հետեւանքով չի տրամադրվում նաեւ պատշաճ բժշկական օգնություն

5. Առաջարկություններ

Ելնելով բժշկական ծառայության հետ կապված գորակոչիկների եւ զինծառայողների մարդու իրավունքների խախտման վիճակի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքներից, եզրահանգումներից՝ ներկայացնում ենք առաջարկություններ, որոնց իրականացումը կնպաստի մարդու իրավունքների խախտման նվազեցմանը գորակոչի կազմակերպման եւ զինծառայության ընթացքում:

Դրանք են.

Օրենսդրության վերաբերյալ

1. Ապահովել գորակոչիկների եւ զինծառայողների իրավունքների վերաբերյալ բոլոր ենթաօրենսդրական ակտերի, նրանցում կատարվող փոփոխությունների վերաբերյալ հանրային մատչելիությունը

ՀՀ պաշտպանության նախարարի 175 հրամանում

1. Ամրագրել գորակոչիկին նրա առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական գննության եզրակացության մասին ակտի պարտադիր տրամադրումը՝ անկախ նրա դիմումի առկայությանը
2. Կարգավորել գորակոչիկի մոտ մի քանի հիվանդությունների առկայության պարագայում զինծառայության պիտանիության խնդրի լուծումը
3. Զորակոչիկի առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական եզրակացության ակտում որպես պարտադիր պայման ներառել զինվորական ծառայությանը բնորոշ ծանրաբեռնվածության պայմաններում նրա առողջական վիճակի հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումների գրառումը
4. Ամրագրել գորացրումից առաջ զինծառայողների առողջական վիճակի պարտադիր բժշկական գննության անցկացումը եւ եզրափակիչ ակտի պարտադիր տրամադրումը զինծառայողին եւ նրա հարազատին

ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայողական կանոնագրքում

1. ամրագրել զինծառայողների դիմումների, բողոքների եւ գանգատների քննության անկախ մեխանիզմ
2. ամրագրել նորմ՝ առողջական խնդիրների հիմքով զինծառայողների վաղաժամկետ զորացրման, մահացության դեպքերի վերաբերյալ պարտադիր ծառայողական քննության անցկացման եւ արդյունքների վերաբերյալ եզրակացությունները հարազատներին տրամադրելու մասին
3. սահմանել ոչ շարային եւ սահմանափակումներով ծառայության իրականացումը

«Չինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում եւ «Չինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին կառավարության 27 նոյեմբերի 2000 թվականի N 778 որոշման մեջ

1. սահմանել առողջական խնդիրների հետեւանքով վաղաժամկետ գորացրված զինժառայողների առողջական, սոցիալական լուծման արժանապատիվ եւ համարժեք նյութական եւ բարոյական փոխհատուցում

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով

1. սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ գորացրված անձանց պաշտպանական գերատեսչության կողմից տրամադրվող փաստաթղթերի 7-օրյա ժամկետ:

Օրենսդրության կիրառման վերաբերյալ

1. Ապահովել շարային ծառայությանը ոչ շարային եւ սահմանափակումներով ծառայությանը պիտանի ճանաչված զինժառայողների ներգրավումը բացառող, կանխարգելող անկախ վերահսկողական մեխանիզմ
2. Ապահովել զորակոչիկների եւ զինժառայողների պարտադիր համալիր բժշկական զննությունը՝ անկախ գանգատների առկայությունից
3. Հրապարակել ՀՀ ԶՈՒ զինժառայողներին տրամադրվող բժշկական ծառայության տրամադրման վիճակի, խնդիրների եւ ձեռնարկված միջոցառումների մասին ՀՀ պաշտպանության նախարարի տարեկան զեկույց
4. Ոչ պատշաճ բժշկական ծառայության հետեւանքով զինժառայողների առողջական խնդիրների գործերով ծառայողական քննության դեպքերը հրապարակայնացնել՝ պահպանելով անձի առողջական վիճակի մասին տեղեկությունների գաղտնիության իրավունքը
5. Իրականացնել զինժառայության հետ կապված առողջական խնդիրների ծագման պատճառների ուսումնասիրություն անկախ բժշկական հանձնաժողովի կողմից:

Հավելված 1

1. Զորակոչի ընթացքում առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկների դեպքերի նկարագրություն

1. Ա. Խ.

2011 թ-ի ապրիլի 18-ին Ա. Խ-ն նախագորակոչային հետազոտություն է անցել Հանրապետական հիվանդանոցում, որի արդյունքում պիտանի է ճանաչվել շարային պարտադիր ծառայության համար: Մինչ այդ՝ 2008-ին, Ա. Խ-ն բուժհետազոտություն է անցել, որի արդյունքում 3 տարով ազատվել է ժամկետային զինծառայությունից: Ա.Խ.-ն տառապում է գիշերամիզությամբ: 2011թ-ի մայիսին Ա. Խ-ն դիմել է ՀՀ պաշտպանության նախարարին՝ կրկնակի բժշկական հետազոտություն անցնելու խնդրանքով: Հուլիսի 3-ին Վանաձորի զինկոմիսարիատի կողմից հրավիրվել է լրացուցիչ հետազոտություն, որի ժամանակ հաստատվել է Ա. Խ-ի՝ պարտադիր շարային զինվորական ծառայության պիտանի լինելը, ինչից հետո նրան պարտադրվել է ստորագրել զորակոչվելու մասին ծանուցագիրը: Ա. Խ-ն հրաժարվել է ստորագրել այն և պահանջել է լրացուցիչ փորձաքննություն: Լրացուցիչ փորձաքննության արդյունքում հաստատվել է, որ նա տառապում է գիշերամիզությամբ, ինչի կապակցությամբ ազատվել է զինվորական ծառայությունից, իսկ նրա նկատմամբ հարուցված քրեական գործը կարճվել է:

2. Ա. Օ.

Ա. Օ-ն 2011 թ-ին ծանուցում է ստացել բանակ զորակոչվելու մասին: Ծանուցագիրը ստանալուց հետո՝ 2011 թ-ի մայիսի 16-ին, բանակ զորակոչվելուց առաջ, սպորտով զբաղվելու ընթացքում Ա. Օ-ն ստացել է ծնկային հատվածի խաչաձև կապանի վնասվածք, ինչի պատճառով չի զորակոչվել բանակ: Նրա վիճակը պարզելու համար Նորք-Մարաշի օրթոպեդիկ բժշկական կենտրոնում իրականացվել է բուժզննում: Այնուհետև պարբերաբար՝ 6-7 անգամ, նույն կենտրոնում Ա.Օ.-ն անցել է կրկնակի բուժզննում: Հետազոտությունների արդյունքում 2011 թ-ի մայիսի 17-18-ին նրա մոտ ախտորոշել են «Աջ ծնկան հողի միջային մահիկի վնասվածք, ծնկոսկրի գերշարժունություն, վիճակ տարած հեմարթրոզից հետո, ֆունկցիայի ժամանակավոր խանգարումով»: 2011 թ-ի հուլիսի 19-ին նրա մոտ ախտորոշել են «Աջ ծնկան հողի միջային մահիկի վնասվածք, վիճակ կոնսերվատիվ բուժումից հետո, ֆունկցիայի աննշան խանգարումով»:

2011 թ-ի նոյեմբերին Ա. Օ-ին վիրահատության ենթարկելու նպատակով ուղեգրել են Էրեբունի բժշկական կենտրոն: Բուժզննում անցնելուց հետո հաստատվել են նախկին ախտորոշումները, սակայն վիրահատության ընթացքում պարզվել է, որ նրա մոտ առկա է «Աջ ծնկահոդի առաջնային խաչաձև կապանի վնասում: Արթրոսկոպիկ վիրահատությունից հետո, ֆունկցիայի ժամանակավոր խանգարում»: Զորակոչիկի խոսքերով՝ վիրահատությունը եղել է անարդյունավետ, նրա մոտ առկա խնդրի հետ կապված որեւէ վիրաբուժական միջամտություն այլևս անհնար է եղել: Բժիշկները գորակոչիկին տեղեկացրել են, որ վիրաբուժական միջամտության համար արդեն բավականին ուշ է եղել. նրա մոտ կտրված է եղել աջ ծնկահոդի առաջնային խաչաձև կապանը, ինչը, սակայն, որեւէ հետագոտման ժամանակ չի հայտնաբերվել: Բժիշկները Ա.Օ.-ին նաև խորհուրդ են տվել այլևս սպորտով չզբաղվել:

Մի քանի ամիս անց՝ 2012 թ-ի փետրվարին, Ա. Օ-ին կրկին անգամ կանչել են ռազմաբժշկական փորձաքննության, որը տեղի է ունեցել Գյումրիում: Այնտեղ ներկա են գտնվել Ա. Օ-ի առողջական խնդիրներին ծանոթ բժիշկները: Նրանք տեսել են, որ Ա. Օհանյանի ոտքը դեռևս վիրակապված է: Գյումրիում Ա. Օ-ն բժշկական հետազոտության չի ենթարկվել: Տեղյակ լինելով նրա առողջական խնդիրների մասին՝ նրան անմիջապես գորակոչից 9 ամիս տարկետում են տրամադրել, սակայն 2012 թ-ի մայիսի 11-ին Ա. Օ-ն զինկոմիսարիատ ներկայանալու մասին ծանուցում է ստացել Վանաձորի զինկոմիսարիատից: Ա. Օ-ն ներկայացել է Վանաձորի զինկոմիսարիատ, որտեղ վերստին ներկա է եղել նույն բժիշկը: Այս անգամ եւս Ա. Օ-ն չի ենթարկվել բուժզննության, սակայն նրա վիճակը գնահատվել է նորմալ: Ա. Օ-ի առողջական գնահատներին ուշադրություն չի դարձվել, նրան հայտնել են, որ ինքը պետք է գնա ծառայության:

2012 թվականի մայիսի 17-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Ա. Օ-ի առողջական վիճակի համալիր հետազոտության իրականացման, առողջական վիճակի պարզաբանման եւ զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցին վերջնական լուծում տալու նպատակով դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը, որին դեռևս որեւէ պատասխան չի տրվել, թեև գրությանը պատասխանելու օրենքով սահմանված ժամկետները արդեն լրացել են:

2012 թվականի հունիսի 8-ին Վանաձորի զինկոմիսարիատի աշխատակիցներն այցելել են Ա. Օ-ի բնակարան եւ հայտնել, որ զինկոմիսարիատը սխալվել է Ա. Օ-ին բանակ գորակոչելու հարցում եւ հավելել, որ Ա.Օ.ն չի գորակոչվի բանակ, կուղեգրվի կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով՝ հետազոտության և բուժման նպատակով:

Ա. Օ-ն հետագայում ծանուցվել է 2012 թ-ի հունիսի 22-ին Գյումրիում անցկացվելիք կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովում

հետազոտությանը ներկայանալու մասին, որտեղ ներկա է եղել նաև Ա. Օ-ին վիրահատած բժիշկը: Վերջինս հայտնել է, որ ինքը ծանոթ է Ա. Օ-ի խնդրին: Սակայն առանց որևէ հետազոտություն իրականացնելու 2012 թ-ի հունիսի 27-ին Ա. Օ-ին զորակոչել են պարտադիր զինվորական ծառայության: Զինծառայողն այժմ գտնվում է Լեռնային Ղարաբաղում:

3. Ա. Ա.

2012-ի մայիսի 10-ին բժշկական հետազոտության արդյունքում Ա. Ա-ն ճանաչվել է պիտանի ոչ շարային ծառայության համար՝ ՀՀ ՊՆ N 175-2010 հրամանի 33 հոդվածի գ/ կետով:

Ա. Ա-ն տառապում է մի շարք հիվանդություններով. երկկողմանի երկայնակի հարթաթաթություն երկրորդ աստիճան, 2-5 մատների մրճանման դեֆորմացիա՝ ֆունկցիայի աննշան աստիճանի խանգարումով, աջ ուսահողի վերին մակերեսի հետայրվածքային սպի, ֆունկցիայի աննշան աստիճանի խանգարումով Աջ աչքը՝ ցածր աստիճանի հիպերմետրոպիա 2.0 դ: Բարդ ուղիղ հիպերմետրոպիկ աստիգմատիզմ 1.0 դ: Ձախ աչքը՝ պարզ ուղիղ հիպերմետրոպիկ աստիգմատիզմ 1.0 դ:

Բժշկական հետազոտության արդյունքում հաստատվել է վերոնշյալ հիվանդությունների առկայությունը: Ա. Ա-ի մայրը պնդում է, որ բուժզննումն օբյեկտիվ չի իրականացվել և բժշկական փաստաթղթերում ախտորոշման աստիճանը մեղմացվել է, չի համապատասխանում իրականությանը: Ըստ զորակոչիկի մոր՝ իր որդին այդ հիվանդությունների առկայությամբ ի վիճակի չէ պարտադիր զինվորական ծառայություն անցնել: Նա կազմակերպությանը հայտնել է, որ նամակով դիմել են ՀՀ ՊՆ հասարակական խորհրդի նախագահին՝ Ա. Ա-ին վերստին հետազոտելու համար աջակցություն հայցելով: Վերջինս պատասխան նամակ է ուղարկել Վանաձորի զինկոմիսարիատ՝ կրկնակի բժշկական հետազոտություն իրականացնելու առաջարկով: Միեւնույն ժամանակ, ըստ Ա. Ա-ի ծնողի, հասարակական խորհրդի նախագահն իրենց խորհուրդ է տվել դիմել պաշտպանության նախարարին՝ Ա.Ա.-ին ընտանեկան դրության հիմքով տարկետում տրամադրելու հարցով. Ա. Ա-ի մայրը ամուսնալուծված է, իսկ միակ քույրը նույնպես առողջական խնդիրներ ունի:

Վանաձորի զինկոմիսարիատը գրությամբ դիմել է Լոռու մարզպետարան՝ Ա. Ա-ի ընտանեկան վիճակի մասին տեղեկանք տրամադրելու խնդրանքով:

Հետագայում Ա. Ա-ն 2012 թ-ի հունիսի 28-ին կենտրոնական հավաքակայան ներկայանալու մասին ծանուցագիր է ստացել: Բուժզննության արդյունքում Ա. Ա-ն ՀՀ ՊՆ N 175-2010 հրամանի 33 հոդվածի բ/ կետով եւ 46 հոդվածով ճանաչվել է ծառայությանը ոչ պիտանի:

2. Զինձառայության ընթացքում առողջական խնդիրներ ունեցող անձանց դեպքերի նկարագրություն

1. Ա. Մ.

Ա. Մ-ն 2010 թ-ի մայիսի 14-ին գորակոչվել է ՀՀ ԶՈւ եւ Շամշադինի շրջանի Բերդ գորամասում անցել շարային ծառայության՝ որպես ժամկետային զինձառայող: Ա. Մ-ն ունի առողջական խնդիր, այն է՝ երկկողմանի քրոնիկ մեզոտիմպանիտ: Հիվանդությունը նրա մոտ առաջացել է վաղ հասակում՝ ձիուց վայր ընկնելու պատճառով. հարվածի հետևանքով պատռվել են նրա ականջների թմբկաթաղանթները: Ծառայության ընթացքում Ա. Մ-ն 3-4 անգամ բուժում է ստացել գորամասի բուժկետում, ինչպես նաև հոսպիտալում: Նրա ծնողները հայտնել են, որ Ա. Մ-ի լսողությունը վատացել է, իսկ ականջից թարախ է արտահոսում: Ելնելով զինձառայողի առողջական վիճակից՝ նրանք խնդրել են բժշկական փորձաքննություն անցկացնել՝ պարզելու Ա. Մ-ի՝ զինձառայությանը պիտանի լինելը: Արդյունքում ՀՀ ՊՆ-ից հայտնել են, թե զինձառայողի մոտ հետազոտությամբ արձանագրվել է աջակողմյան չոր մեզոմիմպանիտ ախտորոշումը, Ա.Մ.-ն ճանաչվել է պիտանի շարային զինձառայությանը, բժիշկները խորհուրդ են տվել զերծ մնալ երկարատև ցրտից:

2. Ա. Հ.

Ա. Հ-ն գորակոչվել է 2011թ-ի հունիսի 10-ին, Գյումրու զինկոմիսարիատից: Նա ծառայել է ԴՄԱ-ի գորամասում: Զինձառայության ընթացքում՝ հունվարի 6-ից, զինվորի պոչուկի մասում առաջացել է կիստա, նա բուժում չի ստացել և չի հոսպիտալացվել, ավելին՝ վիրաբուժական միջամտության բացակայության հետևանքով կիստան գնալով մեծացել է: Ա. Համբարձումյանը դիմել է բուժկետի բժշկին, մի քանի անգամ վիրակապվել է, սակայն կիստան չի լավացել և զինվորը բողոքել է մորը՝ հայտնելով, որ այլևս ի վիճակի չէ երկար ժամանակ նստած դիրքում մնալ՝ մեջքի այդ հատվածում ունեցած անընդհատ ցավերի պատճառով և որ կիստան գնալով բարդանում է: Այս խնդրի առնչությամբ Արմենի մայրը դիմել է կազմակերպությանը:

Ա. Հ-ի մայրը տեղեկացրել է, որ 2012 թ-ի մարտի 27-ին հիվանդ զինվորին տեղափոխել են Վանաձորի հոսպիտալ: Ի պատասխան կազմակերպության 06.04.2012 թ-ի գրությանը՝ հասցեագրված ՀՀ պաշտպանության նախարարությանը, ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցը հայտնել է, որ Ա. Ա-ն 04.04.2012 թ-ին ընդունվել է ԵԿՀ-ի վիրաբուժական բաժանմունք՝ «Պոչուկի էպիթելային ուղիներ, բարդացած ձեւ ախտորոշմամբ»: 13.04.2012 թ-ին կատարվել է

պոչուկի էպիթելային ուղիների ռադիկալ վիրահատություն: Ըստ մոր խոսքերի՝ հոսպիտալի բժիշկը մորը տեղեկացրել է, որ Ա. Հ-ի առողջական վիճակը վատացել է և վիրահատության անհրաժեշտություն է առաջացել՝ ժամանակին անհրաժեշտ բուժօգնություն չտրամադրվելու, սիստեմատիկ բուժում չստանալու հետևանքով: Ապրիլի 19-ի դրությամբ Ա. Հ-ի առողջական վիճակը լավացել է: Վերջինս մինչև մայիսի 16-ը գտնվել է Երևանի հոսպիտալում՝ հետվիրահատական բուժում ստանալու նպատակով: Այնուհետև դուրս է գրվել հոսպիտալից եւ շարունակել զինվորական ծառայությունը:

3. Մ. Դ.

2011 թ-ի հունիսի 13-ին Մ. Դ-ն գորակոչվել է Ղարաբաղի Մարտունի-3 գորամաս (Երրորդ պաշտպանական շրջան): Ըստ հոր խոսքերի՝ մինչ գորակոչվելը Մ. Դ-ն որեւէ հիվանդություն կամ առողջական խնդիր երբեւէ չի ունեցել: Ծառայությունից մի քանի ամիս անց՝ մոտավորապես օգոստոսի կեսերին, Մ. Դ-ն տեղափոխվել է Երևանում գտնվող Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, որտեղ նա ծնկի վիրահատության է ենթարկվել (ըստ հոր հայտնած տեղեկությունների՝ մինչ վիրահատությունը Մ. Դ-ի ծունկը այտուցված է եղել): Առաջին վիրահատությունից հետո նա ենթարկվել է երկրորդ՝ ամորձիների վիրահատության:

2011 թ-ի նոյեմբերին Մ. Դ-ն վիրահատություններից հետո քայլել է կաղալով, իսկ բժիշկները նրա հորը հայտնել են, որ մի քանի օրից զինծառայողը տեղափոխվելու է գորամաս՝ ծառայությունը շարունակելու համար: Հիվանդանոցում հրաժարվել են ծնողին տրամադրել իր որդու առողջական վիճակի եւ առողջական խնդիրների մասին վկայող բժշկական փաստաթղթերը:

2012 թ-ի հունվարի 12-ին Մ. Դ-ին տեղափոխել են գորամաս: Զորամասում զինծառայողը գանգատվում է հետվիրահատական ցավերից, որոնք էլ ավելի են ուժգնանում: 2012 թ-ի հունվարի 12-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիմել է ՀՀ ՊՆ՝ տեղեկանալու Մ. Դ-ի առողջական վիճակի բուժօգնության, ինչպես նաև Մ. Դ-ի առողջական խնդիրների պատճառների մասին: Միեւնույն ժամանակ, կազմակերպությունը պահանջել է բժշկական փաստաթղթերի պատճենները:

Հետագայում ծնողը կրկին պնդել է, որ զինծառայողի առողջական վիճակը վատ է, և 2012 թ-ի հունվարի 25-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կրկին դիմել է ՀՀ ՊՆ, որից հետո ՊՆ ներկայացուցիչը հունվարի 30-ին հեռախոսազանգի միջոցով հայտնել է, որ Մ. Դ-ն անցել է բուժօգնություն եւ որ նա ենթակա է ոչ շարային ծառայության: Միեւնույն ժամանակ ՊՆ ներկայացուցիչը նշել է, որ բժշկական փաստաթղթերի պատճենները ՊՆ-ն չի կարող տրամադրել:

2012 թ-ի փետրվարի 2-ին կրկին այցելելով ՀՔԱ Վանաձորի գրասենյակ՝ ծնողը հայտնել է, որ իր որդին՝ Մ. Դ-ն, բողոքում է ոտքերի ցավից եւ չի կարողանում քայլել: Այդ պատճառով հայրը հունվարի 31-ին հանդիպում է պրոֆեսոր Չարյանի հետ: Վերջինս նրան հայտնում է, որ Մ. Դ-ի վիրահատության ընթացքում ինչ-որ սխալ գործողություն են կատարել, որի հետեւանքով նրա մոտ առկա է ինֆեկցիա եւ որ նույնիսկ չի բացառվում կրկին անգամ վիրահատություն իրականացնելու հնարավորությունը:

Փետրվարի 1-ին զինժառայողի գանգատները հիմք ընդունելով՝ նրան Մարտունի-3 գորամասից տեղափոխել են Ստեփանակերտի հոսպիալ, սակայն առանց բուժզննություն անցկացնելու հետ են ուղարկել գորամաս:

Ներկա պահին երեխան գորամասում է ու ծառայում է առանց որեւէ սահմանափակման, առավել խիստ պայմաններում:

Ըստ ծնողի՝ Մ. Դ-ի նկատմամբ հրամկազմի վերաբերմունքն առավել խիստ է դարձել այն պատճառով, որ նա բազմիցս իր բողոքն է ներկայացրել որդու առողջական խնդիրների կապակցությամբ:

2012 թ-ի հունիս ամսվա դրությամբ Մ. Դ-ն գտնվում է շարային ծառայության մեջ, թեև նա պիտանի է ճանաչվել ոչ շարային ծառայությանը:

4. Ս. Կ.

2009-ի հունիսի 9-ին Ս. Կ-ն գորակոչվել է ՀՀ ՁՈւ Հրազդան քաղաքից: 2009-ի հունիսի 3-ին Ս. Կ-ն, ըստ ծնողի՝ հանրապետական հանձնաժողովի կողմից բուժզննում անցնելուց հետո ճանաչվել է պիտանի ոչ շարային ծառայությանը՝ սնկային հիվանդություն ունենալու պատճառով, որը նրա մոտ առկա է եղել 2008թ-ից: Ս. Կ-ն 2008թ-ին անցել է բուժզննում, և նրա մոտ առկա է եղել պիզմենտային խալ, ինչպես նաև գլխուղեղի ցնցում: Նա ենթակա է եղել գորակոչման, եւ քանի որ այդ ընթացքում ամուսնացել է, մայրը խնդրանքով դիմել է ՊՆ, որպեսզի որդին բանակ գորակոչվի 6 ամիս անց: Ս. Կ-ն 2009 թ-ի հունիսի 3-ին գորակոչվել է Ստեփանակերտի գորամաս: 24 օր հետո Ս. Կ-ն զինժառայությունից դիմել է փախուստի՝ առողջական խնդրի պատճառով: 1 տարի 27 օր փախուստի մեջ գտնվելուց հետո ՌՌ-ն գտնել է նրան և տեղափոխել Գորիսի մեկուսարան: 2010 թ-ի հոկտեմբերի 7-ին կայացել է նրա գործով դատական նիստը, եւ նա դատապարտվել է 1 տարի ազատազրկման, որը Ս. Կ-ի րակոչյանը կրել է 1/2-ով: Վաղաժամկետ ազատվելուց հետո կրկին անցել է ծառայության ԼՂՀ նույն գորամասում, 2011 թ-ի սեպտեմբերի 11-ին գորամասի հրամանատարի հրամանով մեկնել է արձակուրդ, որից հետո չի վերադարձել գորամաս: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ

361-րդ հոդվածի 4-րդ մասով: Զինծառայողի մայրը հայտնում է, որ տղայի ուսագոտու մասում կա խալ, ինչը զինվորական հագուստ, ուսապարկ և զենք կրելու հետևանքով վնասվել է և խալը «ճաք է տվել»: Բուժզննման արդյունքում բժիշկները ծնողին հայտնել են, որ խալը վիրահատելը վտանգավոր է նրա կյանքի համար: Մայրը պատմել է, որ ոչ մի բժշկական օգնություն չստանալով՝ զինվորը դիմել է փախուստի՝ դրանում տեսնելով միակ ելքը: 5 ամիս Ս. Կ.-ն տանն է անցկացրել, հետո նրան հայտնաբերել են և մեղադրանք առաջադրել ծառայությունից խուսափելու համար: Անազատության մեջ գտնվելու ընթացքում Ս. Կ.-ն հայտարարել է հացադուլ՝ իրեն պատշաճ կերպով բուժզննման ենթարկելու պահանջով: 52 օր հացադուլի մեջ մնալուց հետո 2012 թ-ի հունիսի 12-ին Ս. Կ.-ն 361 հոդվածի 4-րդ մասով /գորամասը լքելը/ 2 տարի ժամանակով դատապարտվել է ազատազրկման:

5. Է. Կ.

2012 թ-ի հունիսի 26-ին կազմակերպություն է դիմել Վանաձորի բնակիչ Կարինե Լալայանը իր որդու՝ 1993 թ-ին ծնված Է. Կ-ի իրավունքների պաշտպանության հարցով: Է. Կ-ն 2011-ի դեկտեմբերի 28-ին Վանաձորի զինկոմիսարիատի կողմից զորակոչվել է Մարտունի-3 զորամաս (երրորդ պաշտպանական շրջան)՝ ոչ շարային պարտադիր ծառայության:

Է. Կ-ն ունի առողջական խնդիրներ, մասնավորապես՝ գլխացավ, գլխապտույտ, ընդհանուր թուլություն, հոգնածության զգացում, առկա են ուշագնացության դեպքեր, զարկերակային ճնշման բարձրացում, չի կարողանաում երկար տարածություն անցնել ոտքով և մնալ կանգնած վիճակում: Նա բողոքում է նաև լյարդի ցավերից:

Է. Կ-ի մոտ առողջական խնդիրները ի հայտ են եկել մոտ 3 տարի առաջ՝ 2009 թ-ին: 2011թ-ի սեպտեմբերի 19-ից 22-ը նա բուժզննություն է անցել բուժհետազոտության է ուղեգրվել «Արմենիա» ՀԲԿ-ի նյարդաբանական բաժանմունք: Հետազոտության արդյունքում Է. Կ-ի մոտ ախտորոշվել է «Թույլ արտահայտված վեգետա-անոթային դիստոնիա»: 2011թ-ի սեպտեմբերի 28-ից 29-ը հետազոտություն է անցել «Արմենիա» ՀԲԿ-ի սրտաբանական բաժանմունքում, որտեղ նրա մոտ ախտորոշվել է «Միտրալ անբավարարություն, առաջին աստիճանի-էխոկարդիոգրաֆիկ: Կրծքավանդակի առաջնային պատի ռախիտիկ դեֆորմացիա, առանց արտաքին շնչառության ֆունկցիայի խանգարման»:

Ի պատասխան Է. Կ-ի ծնողի դիմումի՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետը 2012 թ-ի փետրվարի 8-ին հայտնել է, որ Է. Կ-ն հետազոտվել է ՊԲ 39364 գ/մ-ում եւ նրա մոտ ախտորոշվել է «Կրծքավանդակի առաջնային պատի ռախիտիկ

դեֆորմացիա», իսկ ակնաբույժի կողմից ախտորոշվել է «OD հասարակ միոպիկ աստիգմատիզմ 2.5 D, OS հիպերմետրոպիա 3.0 D» եւ «Ակնագնդերի շարժումները դեպի կողմեր թույլ սահմանափակ են»: Այդ հետազոտության արդյունքում գորակոչային հանձնաժողովի կողմից 26 «Դ» եւ 11 «Գ» հոդվածներով ճանաչվել է պիտանի ոչ շարային ծառայությանը: Իսկ 2012 թ-ի փետրվարի 28-ին կրկին ի պատասխան Է. Կ-ի ծնողի դիմումի՝ ՀՀ զինվորական կոմիսար, գեներալ-մայոր Ս. Չալյանը հայտնել է, որ նրա որդու հարցը ներկայացվել է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի որոշմանը, որտեղ համաձայն ՀՀ ՊՆ 175-10 հրամանի 26 հոդվածի «Դ» կետի պահանջների՝ ընդունվել է վերջնական որոշում եւ Է. Կ-ն ճանաչվել է պիտանի ոչ շարային ծառայությանը:

Այնուամենայնիվ, ծառայության ժամանակ Է. Կ-ն պարբերաբար ունեցել է առողջական վիճակի հետ կապված խնդիրներ: Զինծառայող Է. Կ-ն ներգրավված է շարային ծառայության մեջ, այդ թվում՝ ընդգրկված է մարտական հերթափոխում: 2012 թ-ի մայիսին մարտական դիրքում հերթական ծառայությունն անցկացնելու ընթացքում Է. Կ-ի առողջական վիճակը վատացել է, որի մասին զեկուցվել է հրամանատարին: Է. Կ-ին տեղափոխել են զորամասի բուժկետ, սակայն նրա առողջական վիճակը շարունակվում է մնալ մտահոգիչ եւ անհամատեղելի շարային զինծառայության հետ:

3. Զինծառայության ընթացքում առողջական խնդիրների հետեւանքով մահացության դեպքերի նկարագրություն

1. Նարեկ Նիկողոսյան

Նարեկ Նիկողոսյանը մահացել է 2010 թ-ի հունվարի 9-ին՝ գորակոչվելուց 14 օր հետո, Ղարաբաղի Պաշտպանության բանակի Մարտակերտի զորամասերից մեկում: Հարազատների պնդմամբ՝ դեպքի օրը Նարեկը խոսել է եղբոր հետ, ինչպես միշտ ասել, որ ինքը լավ է և որ ամեն ինչ նորմալ է: Այդ զանգից 3 ժամ անց Նարեկի եղբորը զանգահարել է անհայտ անձ և հայտնել, որ Նարեկին տարել են հոսպիտալ: Հոսպիտալում հայտնել են, որ Նարեկը մահացել է:

Դատաբժշկական փորձաքննությամբ Նարեկի մոտ հայտնաբերվել է սուր միելոբլաստային լեյկոզ՝ արյան քաղցկեղ: Ծնողները, սակայն, պնդում են, որ Նարեկը ոչ մի հիվանդություն, զանգատ չի ունեցել եւ բանակ գորակոչվել է որպես առողջ երիտասարդ: «Նարեկը բժշկական հանձնաժողովին ներկայանալու համար Հրազդանում արյան ընդհանուր անալիզ է հանձնել: Իսկ դատափորձագիտական 2-րդ եզրակացության մեջ գրված է եղել՝ քանի որ Նարեկ Նիկողոսյանն արյան ընդհանուր անալիզ չի հանձնել, նրա լեյկոֆորմուլան որոշել անկարելի է»:

Զինձառայողի մայրը նշում է, որ Նարեկի անալիզների թղթերն անհետացել են գործից: Նարեկի մայրը պատմել է, որ իր որդին ոչ մի զանգատ չի ունեցել, միայն նշել է, որ հոգնում է: Ծնողներին նաև զարմացրել է, որ դատաբժշկական առաջին փորձագիտական եզրակացության մեջ գրված է, թե կենդանության օրոք Նարեկը հիվանդությանը բնորոշ նշաններ է ունեցել, ինչը, ըստ նրանց, չի համապատասխանում իրականությանը: Մահացած զինձառայողի հարազատները անհանգստություն են հայտնել, որ հստակ չգիտեն իրենց որդու մահվան, հիվանդության իրական պատճառը: Զինձառայողի՝ առողջական խնդիր ունենալու պարագայում այն պետք է բացահայտվեր զինակոչային բուժզննման ժամանակ: Նարեկ Նիկողոսյանի մահվանից անգամ 4 ամիս անց, սակայն, դեռևս քրեական գործ չի հարուցվել: ՀՀ ՊՆ քննչական ծառայության հասարակայնության հետ կապերի պատասխանատու ավագ սպա Մերի Սարգսյանը տեղեկացրել է, որ Նարեկի դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Պաշտոնական վարկածում նշվում է. «Դատաբժշկական փորձաքննությունների համաձայն՝ Նարեկ Նիկողոսյանի մահը վրա է հասել սուր միելոբլաստային լեյկոզից, որով տառապել է հանգուցյալը կենդանության օրոք: Մարմնական վնասվածքներ, բռնության հետքեր չեն հայտնաբերվել»: ՀՀ ՊՆ քննչական ծառայության 3-րդ կայագորային քննչական բաժնում նյութեր են նախապատրաստում, որեւէ մեկին մեղադրանք առաջադրված չէ, քրեական գործ չի հարուցվել: Պրոֆեսոր Յոյանի անվան արյունաբանական կենտրոնի բժիշկ Շաքե Հովհաննիսյանը պարզաբանել և նկարագրել է հիվանդության դրսևորման ու զարգացման ընթացքը. Սուր միելոբլաստային լեյկոզն ուղեկցվում է որոշակի ախտանիշներով՝ հեմոգլոբինն է իջնում, ստամոքսաղիքային կամ քթային արյունահոսություն, ջերմություն, որի վրա հակաբիոտիկները չեն ազդում, թուլություն, հոդացավեր, լիմֆատիկ հանգույցների մեծացում եւ այլն: Ըստ բժշկի՝ հիվանդությունն ախտորոշվում է արյան ընդհանուր անալիզով եւ արագ զարգացող հիվանդություն է: Հարցին, թե հնարավո՞ր էր արյան ընդհանուր անալիզի ժամանակ հիվանդությունը չհայտնաբերել, բժիշկը պատասխանել է. "Ոչ, երեւի թե ոչ, հնարավոր չէ": Հարկ է նշել, որ Նարեկի արյան անալիզի թղթերն անհետացել են նրա գործից, իսկ դատափորձագիտական 2-րդ եզրակացության մեջ, ըստ ծնողների, գրված է եղել՝ քանի որ Նարեկ Նիկողոսյանը չի տվել արյան ընդհանուր անալիզ, նրա լեյկոֆորմուլան որոշել չեն կարող:⁷

Այս դեպքի առնչությամբ այլևս որեւէ տեղեկատվություն չի տարածվել:

2. Դերենիկ Մանուկյան

2010 թ-ի հունիսի 3-ին արձանագրվել է մահվան դեպք: Նոյեմբերյանի հիվանդանոց է տեղափոխվել պայմանագրային զինձառայող, 1969թ. ծնված

⁷http://tert.hrparak.am/hodvac.php?h_id=5073

Դերենիկ Մանուկյանի դիակը: Երեւան քաղաքի բնակիչ, Նոյեմբերյանի Հաղթանակ գյուղում ժամանակավորապես բնակվող զինծառայողը մահացել է սրտամկանի ինֆարկտի հետեւանքով:⁸ Այս դեպքի առնչությամբ որեւէ այլ տեղեկատվություն առկա չէ:

3. Վարուժան Դավթյանը

2010 թ-ի օգոստոսի 23-ին պաշտպանության նախարարության Կուրաթլիի թիվ 73128 գորամասից անգիտակից վիճակում մայրաքաղաքում գտնվող Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ է տեղափոխվել զինծառայող Վարուժան Դավթյանը: Նա զորակոչվել է Շիրակի մարզի Լեռնապատ գյուղից: Հարազատները, մասնավորապես՝ մայրը, չգիտեն, թե որն է իրենց երեխայի՝ այս վիճակում հայտնվելու պատճառը: Զորամասում ծնողին ասել են, թե զինծառայողը ենթարկվել է կույր աղիքի վիրահատության՝ ապենդեկտոմիայի: Զինծառայողի մայրը լրատվամիջոցների հետ զրույցում նշել է, թե Հակոբի «թոքերը չեն աշխատում, երիկամները չեն աշխատում»: Որովայնի շրջանում կա բացվածք: Մահացած զինծառայողի հարազատները նախարարից ակնկալում են իմանալ, թե ո՞վ է երեխային այդ վիճակին հասցրել, ե՞րբ է իրականում վատացել իրենց երեխան, ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել՝ նրան փրկելու ուղղությամբ: Դեպքի մասին տեղյակ է պահվել զինդատախազին: Կա շրջանառվող վարկած, թե զինվորին ծեծի են ենթարկել՝ նրանից գումար ստանալու ակնկալիքով: Ի պատասխան լրատվամիջոցի հարցի, թե արդյոք որեւէ կերպ ուսումնասիրվում է, թե ինչի հետեւանքով է կտրուկ վատթարացել զինծառայողի առողջական վիճակը, ՀՀ ՊՆ քննչական ծառայությանից հայտնել են, որ իրենց մոտ Դավթյանի հետ կապված որեւէ գործ չի քննվում:⁹ Դեպքի վերաբերյալ այլ տեղեկատվություն չի տարածվել:

4. Հակոբ Բաբույան

2010 թ-ի օգոստոսի 28-ին հոսպիտալում մահացել է զինվոր **Հակոբ Բաբույանը**: Նախնական տվյալներով՝ զինծառայողը մահացել է միոկարդի ինֆարկտի հետեւանքով: Բաբույանը հոսպիտալ էր տեղափոխվել միզուղիների հետ խնդիրներ ունենալու հետեւանքով:¹⁰ Դեպքի վերաբերյալ այլ տեղեկատվություն չի տարածվել:

⁸ <http://www.tesankyun.am/society/216-41-ln-inse-lb-.html>

⁹ <http://aravot.am/old/am/articles/politics/82687/view>

¹⁰ <http://news.am/arm/news/29271.html>

5. Արթուր Ղազարյանը

2010 թ-ի դեկտեմբերին հիվանդության պատճառով մահացել է Հրազդանի Մաքրավան գյուղից բանակ զորակոչված Արթուր Մաքսիմի Ղազարյանը: Արթուր Ղազարյանը ծառայում էր ԼՂՀ Ասկերանի զորամասում: Մահացած զինծառայողը ծառայության մեջ գտնվել է ընդամենը 24 օր, որից հետո նրան նախ տեղափոխել են Ստեփանակերտի, ապա Երևանի ԿԿԶ հոսպիտալ, որտեղ և նա 18 օր հետո մահացել է:

Զինծառայողի մայրը, որը վերջին անգամ որդուն տեսել էր դրանից 25 օր առաջ՝ նոյեմբերի 10-ին՝ հավաքակայան ճանապարհելուց, պատմել է, որ որդին անձանաչելիորեն փոխված է եղել, կորցրած է եղել խոսելու ընդունակությունը և միայն հայացքով է կարողացել ինչ որ բան հասկացնել: Արթուրի մայրը պատմել է, թե որդին զինվորական հոսպիտալում անշարժ վիճակում է եղել, արհեստական շնչառության սարքավորում է միացված եղել, իսկ հիվանդը եղել է բավականին հյուծված վիճակում:

Արթուր Ղազարյանին Ստեփանակերտի հոսպիտալ են տեղափոխել դեկտեմբերի 5-ին, իսկ մեկ օր հետո՝ Երևան: Զինծառայողի մայրը լրագրողի հետ զրույցում նշել է նաև, որ իր որդին զորամասում եղած ժամանակ բազմաթիվ գանգատներ է ներկայացրել՝ կապված իր առողջական վատ վիճակի հետ, սակայն հրամանատարական կազմի կողմից անտեսվել են այդ գանգատները՝ որակվելով իբրև սիմուլացիա: Ծնողը պատմել է նաև, որ ծանոթներից իմացել է, թե որդին վատացել է հավաքակայանում՝ ստացած պատվաստումներից, ինչից հետո Արթուրը ամբողջ ընթացքում գանգատվել է թուլությունից, սրտխառնոցից ու գլխացավից:

ՊՆ քննչական ծառայության բաժինը տեղեկացնում է, որ Արթուր Ղազարյանի մահվան փաստով հարուցվել է քրեական գործ ՔՕ 376 հոդվածի 2-րդ մասով՝ «ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանք», և կատարվում է նախաքննություն:

Քրեական գործը հարուցվել է Արթուր Ղազարյանի մահվանից 6 ամիս հետո միայն: Ծնողների բողոքի հիման վրա նյութեր են նախապատրաստվել, նշանակվել է հանձնաժողովային փորձաքննություն:¹¹ Դեպքի վերաբերյալ այլևս որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

¹¹ <http://www.lragir.am/armsrc/right49448.html>
<http://www.lragir.am/armsrc/right58146.html#.TvSbx2ZMQ7I.facebook>
<http://www.hayatsk.am/355.html>

6. Հայկ Խաչատրյան

2011 թվականի հունիսի 1-ին բանակ գորակոչված Հայկ Մովսեսի Խաչատրյանը գորամասի բուժանձնակազմի անփույթ վերաբերմունքի պատճառով դեկտեմբերի 30-ին, գիշերը ժամը 11:40 մահացել է հիվանդանոցում¹²:

Պաշտոնական տեղեկատվություն

Ըստ պաշտոնական տվյալների, որոնք ներկայացվել են տարբեր լրատվական միջոցներով, Հայկ Խաչատրյանի մահվան պատճառ է հանդիսացել ջրծաղիկով հիվանդանալը: Հարուցել է քրեական գործ. «Ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանք» /ՔՕ 376 հոդվածի 2-րդ մաս/:

Ուսումնասիրությունների արդյունքում ձեռքբերված տեղեկություններ

Հայկը եղել է ֆիզիկապես պատրաստված եւ առողջ, նույնիսկ կարողացել է կիրառել սպորտը վազել: Ծառայությունից չի բողոքել: Հայկի հայրը մշտապես, շաբաթական մեկ անգամ տղայի համար սնունդ, հագուստ եւ գումար է ապահովել:

2011 թ-ի նոյեմբերին Հայկը հեռախոսով հոր հետ խոսելու ժամանակ ասել է, որ հիվանդ է, գրիպ է: Հոր հորդորներից հետո Հայկը այդ մասին հայտնել է հրամանատարին: Սակայն Հայկին մեղադրել են «սիմուլյանտության» մեջ և ստիպել են այդ վիճակում վազել 10 կմ: 2011 թ-ի դեկտեմբերի 10-ի երեկոյան Հայկի ընտանիքը տեղեկացել է, որ նա գտնվում է հոսպիտալում: Նրա մոտ եղել են խնդիրներ՝ կապված դիմային նյարդի հետ: Հաջորդ օրը Հայկի ընտանիքը գնացել է հիվանդին տեսակցության եւ նկատել, որ Հայկի առողջական վիճակը վատ է: Վերադառնալուց հետո հայրը անընդհատ խոսել է Հայկի հետ եւ տեղեկացել, որ դեղամիջոցներ է ընդունում, բուժում է անցնում:

2011 թ-ի դեկտեմբերի 16-ին հայրը կրկին այցելել է Հայկին: Այդ ժամանակ Հայկը համեմատաբար լավ վիճակում է եղել, հորը թվացել է, որ ամեն ինչ դեպի լավն է ընթանում:

Բժշկուհին տեղեկացրել է, որ անհանգստանալու կարիք չկա եւ ասել է, որ Հայկը 12 օր կպառկի ինֆեկցիոն հիվանդանոցում՝ ջրծաղիկի բուժման համար, իսկ այնուհետեւ կշարունակեն դիմային նյարդի բուժումը: Հայկի հայրը բժշկին նաեւ հայտնել է, որ կարող է դեղերով ապահովել կամ նույնիսկ ինքը հոգալ Հայկի բուժումը:

Այնուհետեւ հայրը տեղեկանում է, որ դեկտեմբերի 20-ից Հայկը որևէ բուժում չի ստացել: Իսկ դեկտեմբերի 28-ին՝ որդուն հերթական այցելության ժամանակ,

¹² <http://www.a1plus.am/am/social/2012/01/12/jrcaxik#.Tw6o0uLUc0w.facebook> <http://news.am/arm/news/88803.html>
<http://haynews.am/hy/zinvorakan#.Tw8sbuxW0fU.facebook> http://1in.am/arm/armenia_society_53871.html

հայրը Հայկին գտնում է հիվանդանոցի սենյակներից մեկում՝ լքված: Հարցին, թե կերել է արդյոք այդ օրը ինչ-որ բան, Հայկը պատասխանում է՝ միայն թեյ, որը նրան տվել է հարևան զինվորներից մեկը: Հայկը այդ ընթացքում անընդհատ բողոքել է ստամոքսի ցավից, իսկ բժշկուհիներից մեկը մեղադրել է նրան սիմուլյանտության մեջ:

Դեկտեմբերի 29-ի առավոտյան ժամը 5-ին Հայկի մոտ որովայնի շրջանում սկսվում են ուժեղ ցավեր, այդ թվում՝ նաև էպիլեպսիկ դրսևորումներ, նա երբեմն ընկնում է ցնցումների մեջ: Բժիշկներն ասում են, որ նրա մոտ կա կույր աղիքի բորբոքում և որ նա պետք է մնա իրենց հսկողության տակ, որպեսզի հարկ եղած ժամանակ ենթարկվի վիրահատության: Նաև հարցնում են՝ երեխան արդյոք հիվանդ չէ էպիլեպսիայով: Նշենք, որ այդ ժամանակ արդեն հայտնի է եղել, որ Հայկի մոտ կա նաև ջրծաղիկի վարակ:

Նրան ինֆեկցիոն հիվանդանոց տեղափոխելու հոր հորդորները մերժվում են այն պատճառաբանությամբ, որ նախ պետք է լուծել կույր աղիքի խնդիրը, այնուհետև զբաղվել ջրծաղիկի բուժմամբ: Այնուամենայնիվ, հոր շարունակվող հորդորներից, սպառնալիքներից հետո, առավոտյան հրավիրված բժշկական խորհրդակցության արդյունքում՝ Հայկը տեղափոխվում է Նորքի ինֆեկցիոն հիվանդանոց, որտեղ հետազոտությունից հետո պարզվում է, որ Հայկի մոտ առկա է ջրծաղիկ հիվանդություն՝ իր ծայրահեղ բարդացած, «ներս գցած» վիճակով:

Բժշկի խոսքերով՝ նրա մոտ արդեն ախտահարված են եղել համարյա բոլոր ներքին օրգանները, և նրա կյանքը փրկելու հույս չի եղել: Արդեն պարզ է դառնում որովայնի շրջանում ցավերի և վերջին օրերի էպիլեպսիկ երևույթների իրական պատճառը: Դեկտեմբերի 30-ին, գիշերը ժամը 23:40-ին Հայկը վախճանվում է:

Հայկի հարազատները պնդում են, որ 2011 թ-ի դեկտեմբերի 10-ից մինչև Հայկի վախճանը բժիշկները ոչինչ չեն ձեռնարկել նրա առողջական վիճակը լավացնելու համար: Ավելին, նրան ստիպել են անցկացնել սովորական ծառայություն՝ նման առողջական խնդիրների առկայությամբ: Հայկը հոսպիտալում գտնվել է լքված վիճակում, կատարված բուժումներն էլ եղել են սխալ. ջրծաղիկը բուժել են հակաբորբոքային դեղամիջոցներով: Հիվանդանոցում զինծառայողին անընդհատ չարչարել են: Հարազատները դժգոհում են այն հանգամանքից, որ պաշտոնական վարկածում շրջանառվում է այն հանգամանքը, որ Հայկի առողջական խնդիրները ծագել եւ զարգացել են չափազանց արագ, որի հետ նրանք բացարձակ համաձայն չեն:¹³

¹³ <http://news.am/arm/news/88803.html> ;

<http://www.a1plus.am/am/social/2012/01/12/jrcaxik#.Tw6o0uLUcOw.facebook>

<http://haynews.am/hy/zinvorakan#.Tw8sbuxWOfU.facebook>

<http://www.mamul.am/am/news/5748/ժամկետային-զինծառայող-հայկ-խաչատրյանի-մահվան-դեպքը-բուժանձևակազմի-անփութության-հետևա՞նք#.Tw65E5PkwVt.facebook>

2012 թ-ի մայիսի 8-ին ստացվել են գործի նյութերով փորձաքննության եզրակացությունը:

7. Արմեն Մողրովյան

2011թ-ի հոկտեմբերի 29-ին, ԼՂՀ պաշտպանության բանակի զորամասերից մեկում հերթական մահն է գրանցվել: Ժամը 17:40-ի սահմաններում Լեոնային Ղարաբաղի Հաղորթի շրջանի զորամասերից մեկի տարածքում գտել են զինձառայող **Արմեն Համկեսի Մողրովյանի** դիակը: Վերջինս բանակ էր զորակոչվել Արթիկի զինկոմիսարիատից:

Պաշտպանության նախարարության պաշտոնական վարկածով, զինվորը հանկարծամահ է եղել և կատարված դիահերձման արդյունքում պարզվել է, որ մահը վրա է հասել սրտի պսակաձև անոթների շրջանառության սուր խանգարման հետևանքով: Ըստ պաշտպանության նախարարության լրատվական ծառայության պնդման, զինվորի դիակի վրա բռնության որևէ հետք չի հայտնաբերվել:

Պաշտոնական որևէ հաղորդագրությունում վարկած չկա, թե ինչի հետևանքով է զինձառայողի մոտ զարգացել «սրտի պսակաձև անոթների շրջանառության սուր խանգարում»: Պաշտոնական հաղորդագրությունում թեև ասվում է, որ դիահերձումն արդեն իրականացվել է, սակայն նշված չէ «սրտի պսակաձև անոթների շրջանառության սուր խանգարման» զարգացման բուն պատճառը: Հաղորդագրությունում ասված չէ նաև՝ տառապել է արդյոք զինձառայողը սիրտ-անոթային կամ որևէ այլ օրգան-համակարգի հիվանդություններով մինչ բանակ զորակոչվելը կամ ծառայության ընթացքում, ինչպիսի՞ եզրակացություն է տվել ռազմաբժշկական հանձնաժողովը զինձառայողի առողջության վերաբերյալ՝ մինչ զորակոչվելը, ծառայության ընթացքում զինձառայողը դիմե՞լ է արդյոք զորամասի բուժկետ և եթե այո, ապա քանի՞ անգամ և ի՞նչ գանգատներով, հոսպիտալացվե՞լ է երբևէ և եթե այո, ապա քանի՞ անգամ և ի՞նչ պատճառով: Եվ վերջապես, դիահերձման արդյունքում պարզվե՞լ է արդյոք «սրտի պսակաձև անոթների շրջանառության սուր խանգարման» բուն պատճառը, ինչպիսի՞ դատաբժշկական հետազոտություններ են անցկացվել դիահերձման ընթացքում:

Մահացած զինձառայողի հարազատները պատմում են, որ Արմենը զորակոչվել է 2010 թվականի նոյեմբերին, և 4 ամսվա զինձառայող լինելով՝ վիրահատվել է երակների լայնացման պատճառով: Արմենն այս վիրահատության, ինչպես նաև իր առողջական խնդիրների մասին ծնողներին ոչինչ չի պատմել:

http://lin.am/arm/armenia_society_53871.html

<http://hra.am/hy/events/2012/01/12/soldier>

<http://www.lragir.am/armsrc/right58765.html>

Նույնիսկ չի ասել, թե ԼՂՀ որ հոսպիտալում է պառկած: Միայն վիրահատությունից հետո զանգել է տուն և տեղյակ է պահել, որ հոսպիտալում է:¹⁴

8. Մհեր Հակոբյան

2011-ին մահվան դեպք է արձանագրվել: Դեկտեմբերի 15-ին ժամը 01:55-ին ծայրահեղ ծանր վիճակում «Արմենիա» բժշկական կենտրոն է ընդունվել ՊՆ Ն զորամասի զինճառայող շարքային Մհեր Հակոբյանը՝ «կոմատոզ վիճակ, ուղեղի արյան զեղում» ախտորոշմամբ: Ինչպես հայտնել է ՊՆ քննչական ծառայության լրատվական բաժնի ղեկավար Մերի Սարգսյանը, դեկտեմբերի 15-ին ժամը 01:00-ի սահմաններում Մհեր Հակոբյանը գտնվել է ընկերոջ տանը, որտեղից էլ ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն և գիտակցության չգալով՝ մահացել է:
Մհեր Հակոբյանի մահվան փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության 4-րդ կայազորային քննչական բաժնում նախապատրաստվում են նյութեր, նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

Պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Դավիթ Կարապետյանն իր հերթին HayNews.am-ի թղթակցի հետ զրույցում տեղեկացրել է, որ Մհեր Հակոբյանը ՀՀ ԶՈւ Գլխավոր շտաբի պետի հրամանով դեկտեմբերի 11-ից մինչև 2012-ին հունվարի 30-ը գործուղվել է ՀՀ բոնցքամարտի ֆեդերացիա՝ 2012-ի հունվարին կայանալիք մեծահասակների բոնցքամարտի առաջնությանը մասնակցելու նպատակով:¹⁵

9. Նարեկ Մարտիրոսյան

2012 թ-ի փետրվարի 20-ին ԼՂՀ «Ցոր» զորամասի զինճառայող, շարքային Նարեկ Մարտիրոսյանը մահացել է ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում՝ երկկողմանի օջախային թոքաբորբ, ձախակողմյան էքսուդատիվ պլևրիտից: Հիվանդ զինճառայողը տեղափոխվել է հիվանդանոց փետրվարի 16-ին: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության 4-րդ կայազորային քննչական բաժնում պատրաստվում են նյութեր, նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

¹⁴ <http://www.lragir.am/armsrc/right55578.html#.TrDa3GoXTSg.facebook>
http://1in.am/arm/armenia_society_39982.html
<http://www.hrparak.am/2011/10/30/hankarcamah/>
<http://news.am/arm/news/79980.html>
<http://ilur.am/?p=8300>
<http://www.hra.am/am/events/2011/10/31/army>

<http://www.lragir.am/armsrc/right55578.html>
¹⁵ <http://henaran.am/?p=60892#.Tu-FjDvq-Yw.facebook>
http://www.haynews.am/hy/zinvor-1324312421#.Tu9_gVC2Hy0.facebook
http://www.1in.am/arm/armenia_society_49704.html
<http://www.panorama.am/am/law/2011/12/19/soldier-dead#.Tu-AfyS1Uns.facebook>

Նազիկ Հարությունը՝ մահացած զինծառայողի մայրը հայտնում է, որ վերջին անգամ որդուն տեսել է առողջական լավ վիճակում, հունվարի 26-ին: Որդին բողոքներ չի ունեցել և լիովին առողջ է եղել: Զինվորի ծնողները չեն իմացել իրենց որդու հիվանդ լինելու և հոսպիտալում գտնվելու մասին: Հետո պատահական՝ այլոց տեղեկատվությամբ իմացել են, որ իրենց որդին թոքաբորբով հիվանդ է և գտնվում է հոսպիտալում: Նարեկ Մարտիրոսյանը փետրվարի 11-ից պառկած է եղել Ստեփանակերտի հոսպիտալում, դրան նախորդող երկու օրերին՝ բուժկետում, միայն փետրվարի 16-ին նրան ծանր վիճակում տեղափոխել են Երևան: Նարեկ Մարտիրոսյանի մայրը հայտնում է, որ հոսպիտալում իր որդու հանդեպ ցուցաբերած բժշկական անձնակազմի վերաբերմունքից դժգոհ չի եղել: Նարեկի մայրը հայտնում է, թե տղայի տեղափոխման հենց առաջին օրը բժիշկները հայտնել են, որ տղայի վիճակը ծայրահեղ ծանր է, արդեն ապարատով պետք է շնչեր: Մահացած զինծառայողին Ստեփանակերտից են արդեն ծանր վիճակում տեղափոխել: Նարեկի ծնողները անտեղյակ են, թե ինչ բուժում է իրականացվել հիվանդությունը կանխելու, բուժելու համար Ստեփանակերտի հոսպիտալում՝ մինչ Երևան տեղափոխելը: Հայտնի չէ, թե ինչպիսի հետազոտություններ են անցկացվել: Նարեկի մայրը նաև մտահոգություն է հայտնում այն մասին, որ դեռևս ոչ ոք պաշտոնապես տեղեկատվություն չի ներկայացնում՝ ինչու են ուշացրել իր որդու՝ Երևանի հոսպիտալ տեղափոխելու հանգամանքը: Զինծառայողը հիվանդ վիճակում է փետրվարի 10-11-ից, սակայն Երևան տեղափոխել են ամսի 16-ին:¹⁶

10. Հայկ Ղազարյան

2012թ-ի ապրիլի 7-ին Միսիանի հոսպիտալում մահացել է շարքային զինծառայող **Հայկ Ղազարյանը**: ՊՆ լրատվական վարչությունը տեղեկացնում է, որ դեպքի առնչությամբ հարուցվել է գործ՝ Քր. Օր. 376-րդ հոդվածի հատկանիշներով՝ «անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ»: Ըստ նախնական տվյալների՝ զինծայառողը մահացել է **մենինգոխից**: Հայկ Ղազարյանը գորակոչվել է բանակ Վաղարշապատի զինկոմիսարիատից:

Մինչ բանակ գորակոչվելը Հայկը առողջ է եղել: Հայկի հորեղբայրը լրատվամիջոցի հետ ունեցած զրույցում հայտնել է, որ այդ երեկո նա պարապմունք է ունեցել հետախուզական վաշտում: Հիվանդությունը նրա մոտ շատ արագ է զարգացել՝ 12 ժամում: Հարազատները տեղեկացնում են , որ այդ օրը Հայկը խոսել է ծնողների հետ, ամեն ինչ լավ է եղել: Այնինչ մեկ օրվա մեջ նման զարգացումներ են եղել, և զինծառայողը 16.30-ին վատացել: Մինչ այդ պարզապես ջերմություն է ունեցել: Հայկի Հորեղբայրը նշում է, որ մահացած զինծառայողին

¹⁶ <http://hra.am/hy/events/2012/02/21/army>
http://www.lin.am/arm/armenia_society_61866.html

համապատասխան բուժօգնություն են ցուցաբերել: Նրան տեղափոխել են զորամասի բուժկետ, դիմեղրոլ են ներարկել, այնուհետ Հայկը հրաժարվել է այնտեղ պառկել և ետ է գնացել զորամաս: Ավելի ուշ Հայկի վիճակը կտրուկ վատացել է և նրան տեղափոխել են բուժկետ , այնուհետ՝ Սիսիանի հոսպիտալ:¹⁷

11. Գոռ Մարտիրոսյան

2012-ի մայիսի 8-ին Ստեփանակերտի զորամասերից մեկում մահվան դեպք է արձանագրվել: Հանկարծամահ եղած զինծառայողը Գոռ Մարտիրոսյանն է. Նա մահացել է առավոտյան զինավարժության ժամանակ: ՊԲ լրատվության բաժնի պատասխանատու Սենոր Հասրաթյանը հաստատել է դեպքը և հավելել, որ կատարվում է հետաքննություն: ՊՆ քննչական լրատվական բաժնի ծառայությունից հայտնում են նաև, թե իրենք դեռ տեղյակ չեն՝ Գոռը զորակոչվել է բանակ շարային, թե ոչ շարային ծառայության համար: Բժշկական հանձնաժողովը բուժօգնության ժամանակ պետք է նկատած լիներ զինծառայողի առողջական վիճակի հետ կապված խնդիրները՝ մասնավորապես սրտի վիճակի կապակցությամբ:

Մահացած զինծառայողների համագյուղացիները մամուլի հետ զրույցում ասել են, որ Գոռը սրտի հետ կապված խնդիրներ է ունեցել դեռևս դպրոցական տարիներին: Նրա ծանոթները նշում են, որ դպրոցում ֆիզիկական պատրաստվածության դասաժամին նա վատացել է, ինչից հետո Գոռին արգելել են մասնակցել այդ դասաժամերին: Գործը գտնվում է նախաքննության ընթացքում:¹⁸

4. Զինծառայության ընթացքում առողջական խնդիրների հետեւանքով զինծառայությունից վաղաժամ ազատման դեպքերի նկարագրություն

1. Բ. Մ.

Բ. Մ-ն վաղ հասակից գանգատվել է թուլությունից, սրտի ծակոցներից և թերսնուցման պատճառով ունեցել է նորմայից պակաս քաշ: Ըստ նրա ծնողի՝ 2009 թվականի աշնանը՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու

¹⁷ <http://www.panorama.am/am/law/2012/04/08/soldier-dead/#.T4HI49zbr6Q.facebook>

<http://news.am/arm/news/100435.html>

<http://news.am/arm/news/101305.html>

¹⁸ http://www.lin.am/arm/armenia_society_80759.html

<http://www.mamul.am/am/news/9999/%D5%BD%D5%BF%D5%A5%D6%83%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A5%D6%80%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%AE%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B0-%D5%A5%D5%B2%D5%A1%D5%AE-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80%D5%A8-%D5%BD%D6%80%D5%BF%D5%AB-%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80-%D5%A7-%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%81%D5%A5%D5%AC#.T6tf4IdO4cE.facebook>

http://www.lin.am/arm/armenia_society_80977.html

Ժամանակ, Բ. Մ-ի քաշը եղել է 40 կիլոգրամ, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս ունի բուժման կարիք, Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի որոշմամբ Բ. Մ-ին տրվել է տարկետում՝ մեկ տարի ժամկետով: Սպիտակի զինվորական կոմիսարը գրություն է ուղարկել «Սպիտակի բժշկական կետրոն» ՓԲԸ-ի տնօրենին՝ հայտնելով Բ. Մ-ի բուժման և հսկողության մասին: Սպիտակի զինվորական կոմիսարի գրության հիման վրա «Սպիտակի բժշկական կետրոն» ՓԲԸ-ի կողմից կատարվել է Բ. Մ-ի որովայնի օրգանների համալիր սոնոգրաֆիա: Բ. Մ-ն չի բուժվել և նրա առողջության նկատմամբ հսկողություն չի կատարվել:

2010 թվականի աշնանը՝ Բ. Մ-ի պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու ժամանակ վերջինիս քաշը եղել է նախատեսված նվազագույն շեմից պակաս:

Չնայած վերոնշյալ հանգամանքին, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը որոշում է կայացրել Բ. Մ-ին ճանաչել պարտադիր շարային զինվորական ծառայության համար պիտանի՝ սահմանափակումներով: 2010 թվականի դեկտեմբերի 30-ին Բ. Մ-ն գորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 58831 գորամաս: Առողջական խնդիրների պատճառով Բ. Մ-ն գորակոչման օրվանից գտնվել է գորամասի բուժկետում:

2011 թ-ի փետրվարի 18-ին, երբ զինծառայողի մայրը այցելել է գորամաս՝ որդուն տեսնելու, նրա մոտ շնչառական խնդիրներ է նկատել: Խնդրել է, որ որդուն տեղափոխեն բուժկետ: Փետրվարի 18-ին Բ. Մ-ին տեղափոխել են Մուրացանի անվան զինվորական հոսպիտալ: Մոր խոսքերով, երբ հոսպիտալում իր որդին կշռվել է, 43 կգ է եղել, ինչը զարմացրել է բժշկին: Զինծառայողի դեմքը, մոտ 2 ամիս հոսպիտալում գտնվելու ժամանակ, եղել է վերքերով ծածկված և թարախակալած: Զինծառայողի մորը հայտնել են, թե Բ. Մ-ին սիստեմ են միացրել, գլուկոզա, որպեսզի նրա քաշը ավելանա: Մայրը նաև հայտնել է բժշկին, թե տղայի մոտ նկատում է հոգեկան վարքի տարօրինակություններ, սակայն բժիշկը ասել է, թե ամեն ինչ նորմալ է և Բ. Մ-ն պետք է ծառայի: Այնուհետ, զինծառայողին տեղափոխել են գորամաս, 10 օր անց զինծառայողին ուղեգրել են Կանադի հոգեբուժարան: Որոշ ժամանակ անց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 1353 որոշմամբ Բ. Մ-ն ճանաչվել է խաղաղ ժամանակ ծառայության համար ոչ պիտանի և գորացրվել է:

Փաստորեն, Բ. Մ-ին խաղաղ պայմաններում գորակոչելը եղել է ոչ իրավաչափ:

Տարկետում ստանալու օրվանից մինչև 2010 թվականի աշուն Բ. Մ-ն բուժում չի ստացել և բժիշկների հսկողության տակ չի գտնվել, ինչից հետևում է, որ 2009

թվականին հայտնաբերված առողջական խնդիրը չի լուծվել: 2010 թվականի աշնանը ևս Բ. Մ-ն ենթարկվել է բուժզննության, եւ հանրապետական գորակոչային հանձնաժողովը անտեսել է Բ. Մ-ի առողջական վիճակը և չի իրականացրել առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, բուժման կամ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանիության կապակցությամբ տարկետում տալու մասին իր լիազորությունը:

2. Ն. Գ.

2010 թվականի մայիսի 31-ին Ն. Գ-ն Վանաձորի զինկոմիսարիատից պարտադիր զինվորական ծառայության է գորակոչվել: Ծառայության ընթացքում առողջական խնդիրներ ունենալու պատճառով 2010 թվականի օգոստոսի 4-ին հետազոտվել է ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության կենտրոնական հանձնաժողովի կողմից և 2010 թվականի օգոստոսի 5-ին առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ գորացրվել է պարտադիր զինվորական ծառայությունից, որի վերաբերյալ առկա է 2010 թվականի սեպտեմբերի 8-ի` ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 1000 հրամանը:

Նշված հրամանի համաձայն` Ն. Գ-ն ճանաչվել է հետագա զինվորական ծառայության համար ոչ պիտանի, ազատվել է զբաղեցրած պաշտոնից, հանվել անձնակազմի ցուցակներից, բոլոր տեսակի բավարարումներից, ժամկետից շուտ գորացրվել է ՀՀ ԶՈւ պահեստագոր և ուղարկվել ՀՀ Վանաձորի զինվորական կոմիսարիատ, որտեղ Ն. Գ-ն 2010 թվականի սեպտեմբերի 25-ին անցել է զինվորական հաշվառման:

2011 թվականի նոյեմբերի 23-ին Վանաձորի զինկոմիսարիատի աշխատակիցները այցելել են Ն. Գ-ին և ներկայացրել ծանուցագիր այն մասին, որ ՀՀ զինվորական դատախազի 07.11.2011 թվականի N 19/1319-11 միջնորդության արդյունքում ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը կարգադրել է վաղաժամկետ գորացրված Ն. Գ-ին 2011 թվականի աշնանը գորակոչել ՀՀ զինված ուժեր:

2011 թ-ի դեկտեմբերի 9-ին ի պատասխան ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գրությանը, թե ինչու է Ն. Գ-ն վերստին գորակոչվում ՀՀ զինված ուժերում ծառայելու, ՀՀ ՊՆ-ից հայտնել են, որ Ն. Գ-ն առողջության հետ կապված հարցը ուսումնասիրվել է, Ն. Գ-ն ենթարկվել է մարմնական զննման, որի արդյունքները ցույց են տվել, որ Ն. Գ-ի առողջության վերաբերյալ նախկինում տրված ախտորոշումը ճիշտ է, եւ վերջինս ճանաչվել է «Ոչ պիտանի զինվորական ծառայության համար խաղաղ ժամանակ, պիտանի ոչ շարային ծառայության համար պատերազմի ժամանակ»:

Այսպիսով, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը իր նախաձեռնությամբ հարուցել է վարչական վարույթ, որի արդյունքում Ն. Գ-ի նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունել է միջամտող վարչական ակտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Նույն օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Տվյալ պարագայում, Ն. Գ-ն չի ծանուցվել վարչական վարույթի հարուցման, ինչպես նաև վարչական գործի քննության տեղի և ժամանակի մասին, այն դեպքում, երբ վարչական մարմնում իրականացվել է վարչական գործի քննարկում, որի արդյունքում Ն. Գ-ին, որպես վարչական վարույթի մասնակցի, հնարավորություն չի տրվել արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Ավելին, վարչական մարմինը չի ապահովել վարչական վարույթի վերաբերյալ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, քանի որ Ն. Գ-ն հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իր օգտին առկա հանգամանքներն ու փաստարկները:

Գործի առնչությամբ Ն. Գ-ի ներկայացուցիչը 2012 թ-ի հունվարի 9-ին դատական հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի՝ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի՝ Ն. Գ-ին 2011 թ-ի աշնանը ՀՀ ԶՈՒ գորակոչելու մասին 07.11.2011 թ-ի կարգադրությունն ամբողջությամբ վերացնելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանը 2012 թ-ի փետրվարի 3-ի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է: Ն. Գ-ի ներկայացուցիչը 2012 թ-ի մարտի 30-ին Վարչական վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել Ն. Գ-ի ներկայացուցչի հայցադիմումը ընդդեմ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի՝ Ն. Գ-ին 2011 թ-ի աշնանը ՀՀ ԶՈՒ գորակոչելու մասին, 07.11.2011 թ-ի կարգադրությունն ամբողջությամբ վերացնելու պահանջի մասին հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժել: Այնուհետև 2012 թ-ի ապրիլի 20-ին Ն. Գ-ի ներկայացուցիչը ներկայացրել է վճռաբեկ բողոք:

3. Դ. Ա.

2011 թվականի դեկտեմբերի 6-ին իր որդու՝ Ասկերանի գորամասի զինծառայող Դ. Ա-ի իրավունքի պաշտպանության հարցով ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել Դ. Ա-ի մայրը:

2011թ-ի նոյեմբերի 30-ին Դ. Ա-ն Վանաձորի զինկոմիսարիատի կողմից գորակոչվել է շարային ծառայության՝ սահմանափակումով: Ծառայության ընթացքում Դ. Ա-ն բողոքել է առողջական վիճակից, այդ մասին նաև տեղյակ է պահել գորամասի բուժքրոջը: Դ. Ա-ի մոտ առկա է եղել բարձր ճնշում, ինչպես նաև հավելյալ քաշ: 2011-ի դեկտեմբերի 11-ից 23-ը նրան տեղափոխել են Ստեփանակերտի հոսպիտալ: 13.01-16.01.2012 թ-ին Դ. Ա-ն հետազոտվել է Ստեփանակերտի զինվորական հոսպիտալում եւ ուղեգրվել ԿԿԶՀ, այնուհետեւ՝ ԵԿՀ: 16.01-06.03.2012 թ-ին հետազոտվել եւ բուժվել է ԵԿՀ-ում, կատարվել են հետազոտություններ: 06.03.2012 թ-ին «Զգալի արտահայտված ՆՑԱ, խառը տիպի, ալիմենտար կոնստիտուցիոնալ ճարպակալում 3-րդ աստիճան, աննշան արտահայտված երկկողմանի կեղծ գինեկոմասիտիա, երկկողմանի երկայնակի հարթաթաթություն 2-րդ աստիճան, քայլքի աննշան խանգարումով» ախտորոշմամբ ներկայացվել է ԿՌԲՀ նիստին եւ համաձայն ՀՀ ՊՆ 175-10 թ. հրամանի 28 ա, 20 գ, 43 դ հոդվածների 1-ին սյունակի, կայացվել է որոշում, որ Դ. Ա-ն պիտանի չէ զինծառայությանը խաղաղ ժամանակ: Սակայն մինչ սույն թվականի հուլիս ամիսը Դ. Ա-ին չի տրամադրվել նրա վաղաժամկետ ազատման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը:

4. Ս. Մ.

Ս. Մ-ն /ծնված 1993 թ-ին/, 2010 թ-ի օգոստոսին ընդունվել Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ: Մինչ այդ անցել է համապատասխան բուժզննություն, որի արդյունքների համաձայն՝ նա առողջ է ճանաչվել: Առաջին կուրսն ավարտելու ընթացքում հիվանդացել է /նրա մոտ սկսվել է ոտքերի շրջանում սնկային հիվանդություն/, որի համար 2011 թ-ի հուլիսի վերջին դիմել է ինստիտուտի բուժկետ, որտեղ 4-5 օր պառկելուց հետո նրան օգոստոսի առաջին շաբաթվա ընթացքում տրամադրվել է արձակուրդ: Ըստ Սամվելի ծնողների՝ բուժծառայության պետի կողմից իրենց որդին բուժկետում ստացել է սխալ բուժում, որից հետո 3 անգամ բուժում է ստացել հոսպիտալում: Արձակուրդի ժամանակ հիվանդությունը կրկնվել է, որի պատճառով դիմել է քաղաքացիական բժշկական հաստատություն, որտեղ նրան դեղեր են նշանակվել: Ս. Մ-ն շարունակել դեղերի ընդունումը արձակուրդից վերադառնալուց հետո: Երբ նշանակված դեղերը վերջացել են, Ս. Մ-ին սկսել են բուժել բուժկետում նշանակված դեղերով: Նրան բուժկետում պահել են մեկ շաբաթ, այնուհետեւ դուրս են գրել, սակայն մեկ օրից կրկին ընդունել են բուժկետ

և այդպես մի քանի անգամ: Ինստիտուտի բուժմասում գտնվել է բուժում է ստացել մոտ 1.5 ամիս /կապիտան Թադեւոսյանի մոտ/:

Ծնողները բողոք են ներկայացրել սխալ բուժում իրականացնելու հիմքով, որից հետո համապատասխան ուղեգրով Ս. Մ-ն տեղափոխվել է Կանազի հոսպիտալ: Մոտ 20 օր մնացել է հոսպիտալում, իսկ արդեն 2011 թ-ի սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 16-ը Սամվելը գտնվել է տանը՝ արձակուրդում: Այդ ընթացքում ոտքերի հետ կապված խնդիրները այլևս չեն անհանգստացրել: Արձակուրդից հետո, երբ նա վերադարձել է ինստիտուտ, զանգահարել է ծնողներին և հայտնել, որ իր մոտ առկա է սնկային հիվանդություն և որի համար կրկին անգամ դիմել է կապիտան Թադեւոսյանին:

Ըստ Սամվելի ծնողների՝ իրենք իրենց ծանոթի միջոցով բողոք են ներկայացրել պաշտպանության նախարարին, որից հետո բուժկետի բժիշկը հայտարարել է, որ այնպես կանի, որ Սամվելին ինստիտուտից հեռացնեն:

2011 թ-ի հոկտեմբերի 20-ին Սամվելը կրկին անգամ հայտնվել է հոսպիտալում: Հոսպիտալում Սամվելի հայրը հանդիպել է բժիշկ, մայրը Սեյրան Հովհաննիսյանին, որը ծնողին հայտնել է, թե առաջին անգամ հոսպիտալում նրան մինչև վերջ չեն բուժել: Բացի այդ, բաժնի վարիչը հայտնել է, որ սկզբնական շրջանում Սամվելը պետք է անցած լիներ ադապտացիոն շրջան և չպետք է կրեր զինվորական կոշիկներ:

Վերադառնալուց հետո կապիտան Թադեւոսյանը Ս. Մ-ին ուղարկել է վաշտ, իսկ արդեն երկու օր հետո առանց զինվորական հագուստի և կոշիկների, հողաթափերով մայրը Դավթյանը Ս. Մ-ին տարել է Հոկտեմբերյանի պոլիգոն, որտեղ նա մնացել են երկու շաբաթ: Ս. Մ-ն հրամանատարին խնդրել է բերել իր զինվորական հագուստը, քանի որ շատ ցուրտ է եղել և նա գտնվել է վրանում, այդքան ժամանակ այնտեղ ուղղակի նստելով ժամանակ է անցկացրել: Այս մասին ծնողը ևս հայտնել է հրամանատարին, իսկ վերջինս ասել է, որ այդ հարցին լուծում կտան: Հոկտեմբերյանից վերադառնալուց հետո Ս. Մ-ի մոտ կրկին սրացել է սնկային հիվանդությունը: Ինստիտուտում մոտ մեկ շաբաթ դժվարություններ է ունեցել քայլելիս: 2011 թ-ի նոյեմբերի 27-ին հայրը եղել է որդու մոտ, քանի որ տեսակցության օր է եղել /ինչպես ընդունված է ամեն ամսվա վերջին կիրակի օրը/: Հայրը որդուն խորհուրդ է տվել գնալ բուժկետ՝ կապիտան Թադեւոսյանի մոտ: Նոյեմբերի 27-ին Ս. Մ-ին Թադեւոսյանը ուղարկում է հոսպիտալ, որտեղ նա մնում է մինչև 2012 թ-ի հունվարի 10-ը: Այս անգամ, երբ հայրը հանդիպել է Հովհաննիսյանին, վերջինս հայտնել է, որ Ս. Մ-ն մեկ ամիս շարունակ պետք է անցնի վերաանգնողական շրջան, ստանա բուժում և ուղարկել է ռազմաբժշկական հանձնաժողով /ՌԲՀ/: Այդ ընթացքում Ս. Մ-ի մոտ ամեն ինչ նորմալ է ընթացել: Ս. Մ-ն դուրս է գրվել 2012 թ-ի հունվարի 10-ին և երբ եկել է բուժկետ, հարցրել են,

թե ինչու է եկել եւ կանչել են պետի մոտ: Պետի մոտ է եկել նաեւ կապիտան Թադեւոսյանը: Ս. Մ-ն տեղյակ չէ, թե ինչի մասին են զրուցել պետը եւ Թադեւոսյանը, որից հետո Ս. Մ-ին հայտնել են, որ վերջինս հետ է մնում դասերից բազմաթիվ բացակայությունների պատճառով եւ որ պետք է փաստթղթերը դասավորեն եւ հեռացնեն ինստիտուտից: Սակայն Ս. Մ-ն բացատրել է, որ դա իր մեղքով չի եղել, այլ հենց սկզբից ոչ ճիշտ բուժման հետեւանքով:

Ս. Մ-ի հայրը 2012 թ-ի հունվարի 11-ին այցելել է որդուն եւ ցանկություն է հայտնել հանդիպել պետի հետ: Սակայն 2 ժամ սպասելուց հետո նրան հայտնել են, որ պետի փոխարեն նա կարող է հանդիպել գումարտակի հրամանատարի հետ: Վերջինս լսելով դեպքի մասին՝ Ս. Մ-ի հորը հայտնել է, որ նա առողջական խնդիրներ ունի: Հրամանատարը զրույցի ընթացքում նշել է, որ Ս. Մ-ն եղել է արձակուրդում մինչեւ հունվարի 10-ը՝ չիմանալով, որ իրենց կուրսանտը արձակուրդում չի գտնվել, այլ բուժում է ստացել հոսպիտալում: Հրամանատարը նաեւ նշել է, որ Ս. Մ-ին հավանաբար կհատկացնեն ակադեմիական արձակուրդ բուժում ստանալու նպատակով՝ ՊՆԱԽարարի հրամանախի հիման վրա:

Բավականին երկար ժամանակ Ս. Մ-ն գտնվել է հաստատությունում, քանի որ չէր արձակվել նախարարի հրամանը, իսկ Ս. Մ-ից պահանջել են հանձնել քննություններ այն դեպքում, երբ նա առողջական խնդիրների առկայության պատճառով չի հաճախել դասերին:

Ս. Մ-ն հորը 2012 թ-ի փետրվարի 25-ին Վազգեն Սարգսյանի անվան ինստիտուտից զանգահարել եւ ասել են, որ ուզում են հանդիպել, հայրը ասել է, որ լավ կլինի՝ մեկ կամ երկու օր առաջ տեղեկանցնեն: Այնուհետեւ երկրորդ անգամ զանգահարել եւ հայտնել են, որ երկուշաբթի օրը կտեղեկացնեն, քանի որ այդ օրը նրանք խորհրդակցություն ունեն:

2012 թ-ի փետրվարի 21-ին բժիշկ Թադեւոսյանը Ս. Մ-ին կանչել է իր մոտ եւ հարցրել, թե ինչու են բողոքել: Ս. Մ-ին բացատրել է, որ դա իր պատճառով է, որ ձեռք է բերել այդ հիվանդությունը եւ զրկվել ռազմական ինստիտուտում սովորելու հնարավորությունից:

Նա նաեւ զանգահարել է Ս. Մ-ի հորը եւ հարցրել, թե ինչու են բողոքել: Հայրը բացատրել է նրան, որ Ս. Մ-ի առողջական խնդիրների առաջացման մեղավորը հենց ինքն է, որը մեկ եւ կես ամիս երեխային պահել է եւ չի ուղեգրել համապատասխան բուժումն ստանալու:

Այնուամենայնիվ, Ս. Մ-ն ճանաչվել է ոչ պիտանի ռազմական ինստիտուտում ուսումը շարունակելու համար եւ համապատասխանաբար տրվել է զորացրման հրաման, որը Ս. Մ-ին է տրամադրվել 60 օր հետո: Նշանակվել է ծառայողական քննություն: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 11.06.2012 թ-ին դիմել է ՀՀ

պաշտպանության նախարարություն՝ Ս. Մ-ի վերաբերյալ ծառայողական քննություն իրականացնելու մասին որոշման եւ նյութերի պատճենները:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ՊՆ աշխատակիցը հայտնել է հետեւյալի մասին. «ՀՀ պաշտպանության նախարարի կամ վերջինիս տեղեկալներից որեւէ մեկի հրամանով ծառայողական քննություն չի իրականացվել, այլ կատարված մասնագիտական ուսումնասիրության արդյունքում կատարվել է հետեւություն, որ Ս. Մ-ի հիվանդությունը՝ էկզեման, մաշկի խրոնիկական բորբոքային, ալերգիկ բնույթով, ռեցիդիվելու հակումով հիվանդություն է, որի սկսումը, սրացումները, բարդությունները պայմանավորված են ոչ այնքան արտաքին գործոններով, որքան տվյալ օրգանիզմի ֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Արտաքին գործոններն ունեն միայն նպաստող նշանակություն: Ուստի պնդել, որ բուժկանխարգելիչ աշխատանքների շնորհիվ կկանխվեր կուրսանտ Ս. Մ-ի մոտ հիվանդության զարգացումը, հնարավոր չէ»:

5. Ռ. Հ.

2011 թ. հուլիսի 16-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակ էր դիմել Ռոբերտ Հովհաննիսյանը՝ իր որդու՝ Ռ. Հ-ի իրավունքների պաշտպանության հարցով:

Ռ. Հ-ն 2011 թ. հունիսի 29-ին գորակոչվել էր բանակ եւ ծառայությունն անցնում էր Վայքի զինվորական մասում, չնայած այն հանգամանքին, որ նրա մոտ առկա են մի շարք հիվանդություններ, որոնց պատճառով Ռ. Հ-ն 2008 թ. ստացել էր *տարկետում*:

Ծառայության անցնելով 2011 թ.՝ Ռ. Հ-ի մոտ առողջական խնդիրների պատճառով առաջացել էին ծառայության հետ կապված դժվարություններ: Բացի այդ, զինծառայողի հայրը տղայի կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա տեղեկացրել էր կազմակերպությանը, որ իր որդին զորամասում հուլիսի 11-ին ենթարկվել էր ծեծի, որից հետո զինծառայողը բողոքել է երիկամների ցավից, որի մասին եւ կազմակերպությունը տեղեկատվություն էր խնդրել ՀՀ պաշտպանության նախարարությունից:

Զինծառայողին ծեծի ենթարկելու փաստի առթիվ կազմակերպությունը դիմել էր ՀՀ զինվորական դատախազին եւ ՀՀ պաշտպանության նախարարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով քրեական գործ հարուցելու եւ հաղորդման վերաբերյալ որոշում կայացնելու համար: Հաղորդմանն ի պատասխան, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության Եղեգնաձորի զինվորական դատախազ Տ. Սարգսյանը հայտնել էր կազմակերպությանը, որ պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Ռ. Հ-ին ծեծի ենթարկելու վերաբերյալ հրապարակման առթիվ քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ Քր. Դատ.

Օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով՝ հանցադեպի բացակայության հիմնավորմամբ:

Ռ. Հ-ի առողջական խնդիրների, մասնավորապես երիկամների խնդիրների վերաբերյալ կազմակերպության գրության վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանը հայտնել էր, որ 2008 թ. ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված կենտրոնական բժշկական հանձնաժողովի N 18-262/7649 որոշմամբ Ռ. Հ-ն ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության խաղաղ ժամանակ «պրիմիտիվ անձ, էմոցիոնալ անկայունությամբ» ախտորոշմամբ եւ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի համապատասխան կետի ստացել է տարկետում 3 տարի ժամանակով, իսկ 2011 թ. գարնանային զորակոչին նա կրկին հետազոտվել է նույն բուժհաստատություններում եւ ըստ տրված եզրակացությունների, ինչպես նաեւ Վանաձորի պոլիկլինիկայից տրված հետազոտությունների արդյունքների՝ զորակոչիկը ներկայացվել է կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին, որի կողմից ճանաչվել է պիտանի շարային ծառայության համար՝ սահմանափակումներով, եւ զորակոչվել է ՀՀ զինված ուժեր:

Այստեղ հարկ է նշել, որ զորակոչիկի մոտ առկա են եղել այն նույն հիվանդությունները, որոնց պատճառով նա 2008 թ. ստացել էր տարկետում 3 տարի ժամանակով:

Ինչ վերաբերում է զինծառայողի մոտ առկա երիկամների խնդրին, ապա հայտնել են, որ վերջինս նման խնդիրներ չի ունեցել ոչ կցագրման, ոչ էլ 2008 եւ 2011 թթ. զորակոչերի ժամանակ, իսկ թե ինչպես է այդ հիվանդությունը ձեռք բերվել, ապա այդ մասին եզրակացություն կարող է տրվել համապատասխան հետազոտություն անցկացնելուց հետո:

Մեպտեմբերի 7-ին անցնելով ռազմաբժշկական փորձաքննություն՝ համաձայն ՀՀ ՊՆ N175 հրամանի համապատասխան կետերի Ռ. Հ-ն ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության եւ ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից:

6. Հովհաննես Վարդանյան

2011թ-ի օգոստոսի վերջին, Ասկերանի զորամասի զինծառայող Հ. Վարդանյանին տեղափոխել են հոգեբուժարան: Հ. Վարդանյանի զինծառայակից ընկերները նրա ծնողներին հայտնել են, թե Հ. Վարդանյանն 9 օր է, ինչ գտնվում է հոգեբուժարանում՝ խելագարված վիճակում: Զինծառայողի հայրը պատմել է, որ մինչ այդ զորամասից իրեն տեղեկացրել են, թե որդին սպայի հետ վիճել է: Դրանից հետո որդին 17 օր կապի մեջ չի եղել, նրանից տեղեկություն չեն ունեցել: Հետո իմացել են, որ հոգեբուժարանում է, որտեղից էլ վաղաժամ զորացրել են

ծառայությունից: Խելագարության հասած զինվորը պատմում է, որ որոշ սպաներ ցանկացել են իրեն ծեծել և բռնաբարել:

Քրեական գործ հարուցվել է միայն ՋԼՄ-ներում՝ Հ. Վարդանյանի հոր՝ Վ. Վարդանյանի՝ սպայի կողմից որդու նկատմամբ կիրառված բռնության վերաբերյալ հրապարակումներից հետո: ՀՀ զինվորական դատախազ Գևորգ Կոստանյանի ցուցումով հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով (իշխանագանգությունը):¹⁹

Դեպքից հետո ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 20.09.2011 թ-ին դիմել է ՀՀ զինվորական դատախազին՝ Հ. Վարդանյանին ծեծի ենթարկելու գործով քրեական գործի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու պահանջով, ինչպես նաև պարզելու համար, թե արդյոք կան մեղադրյալներ, կասկածյալներ կամ ձերբակալված անձինք: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցը 29.09.2011 թ-ին հայտնել է, որ նշված գործով հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ ՊՆ ՔԾ 1-ին կայազորային քննչական բաժնին: Միեւնույն ժամանակ հայտնել է, որ մեղադրյալներ, ձերբակալված, կալանավորված անձինք չկան:

7. Ղևոնդ Օհանյան

2011 թ. օգոստոսին Ասկերանի զորամասերից մեկում արձանգրվել է ևս մեկ զինծառայողի վաղաժամկետ զորացրման դեպք՝ կապված զինծառայողի առողջական խնդրի հետ: Վաղաժամկետ զորացրվել է Ղ. Օհանյանը, ով մեկ այլ զինվորի հետ ունեցած կանոնադրական խնդիրների պատճառով ձեռք է բերել հոգեկան հիվանդություն: Կալանավորվել է ժամկետային զինծառայող Կարեն Ավագյանը: Նա ակոնիտիկայի խմիչքի ազդեցության տակ ստորացրել է Ղ. Օհանյանի պատիվն ու արժանապատվությունը, ծեծել՝ պատճառելով մարմնական միջին աստիճանի վնասվածքներ: Արդյունքում Ղևոնդը ստացել է հոգեկան հիվանդություն և վաղաժամկետ զորացրվել ՀՀ զինված ուժերից: Զինծառայող Կարեն Ավագյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 3-րդ մասով. զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով, կամ զուգորդվել է բռնություն գործադրելով և առաջացրել ծանր հետևանքներ (պատժվում է ազատազրկմամբ՝ 4-8 տարի ժամկետով):²⁰

¹⁹ http://www.1in.am/arm/a_a_32683.html

²⁰ http://www.1in.am/arm/armenia_society_32683.html

Հավելված 2.1



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax: (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2011- 279

11.10.2011 թ.

ՀՀ պաշտպանության նախարար

Սեյրան Օհանյանին

Հարգելի պարոն նախարար,

Մեր կազմակերպությունը իրականացրել է պաշտպանության նախարարի 2006 եւ 2010 թվականների N 378 եւ N 175 հրամաններով հաստատված *Ձինապարտների բժշկական եւ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի մեջ* կատարված փոփոխությունների ուսումնասիրություն:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ Ձեզ տրամադրել տեղեկություն, մասնավորապես հետևյալ հարցերի շուրջ.

1. Ինչո՞վ է պայմանավորված եւ ինչո՞վ է հիմնավորվում.

- 2006 թ-ի կարգում հոդված 1-ի՝ *Մտավոր հետամնացություն* բ) կետին, այն է՝ «չափավոր և թեթև աստիճանի մտավոր հետամնացություն», 2010 թ-ի կարգում «վարքային խանգարումներով» արտահայտության ավելացումը
- 2006 թ-ի կարգում հոդված 11-ի՝ *Կենտրոնական նյարդային համակարգի վարակիչ (մանրէային, վիրուսային) եւ վարակիչ-ալերգիկ հիվանդությունների հետեւանքներ գլխուղեղի եւ ողնուղեղի օրգանական ախտահարումներ՝ ընդհանուր վարակների, սուր եւ խրոնիկ ինտոքսիկացիաների ժամանակ* բ) կետի, այն է «ֆունկցիաների չափավոր կամ աննշան խանգարումով», վերափոխումը «ֆունկցիաների չափավոր խանգարումով» արտահայտության 2010 թ-ի կարգում
- 2006 թ-ի կարգում հոդվածի 22-ի՝ *Տուբերկուլոզ* գ) կետին «ակտիվ՝ մարող» արտահայտությանը «ոչ ակտիվ» արտահայտության ավելացումը
- 2006 թ-ի կարգում *Աչքի* մի շարք հիվանդությունների դեպքում բազմաթիվ փոփոխությունները:

2. Որոշ հիվանդությունների դեպքում ծառայության պիտանելիության բաժնում ըստ 2006 թ-ի գործող կարգի՝ «խաղաղ ժամանակ վերափորձաքննության ենթակա չլինելու» պահանջը հանվել է 2010 թ-ի կարգից: Որոշ հիվանդությունների առկայության դեպքում 2010 թ-ին գորակոչիկը ճանաչվում է ծառայությանը պիտանի սահմանափակումներով.

ա) ինչո՞վ է պայմանավորված նման փոփոխությունը

բ) որո՞նք են նշված սահմանափակումներով ծառայության պարտականությունների ցանկը, եւ ինչ իրավական փաստաթղթերով է կարգավորվում նման սահմանափակումները:

3. 2006 թ-ի կարգի պիտանելիության բաժնում որոշ հիվանդությունների առկայության դեպքում «Պիտանի են զինվորական ծառայությանը ծառայողական պարտականությունների սահմանափակումով» նորմը վերափոխվել է «Պիտանի են ոչ շարային ծառայության»:

Ինչո՞վ է պայմանավորված նման փոփոխությունը, որո՞նք են ոչ շարային եւ ծառայողական պարտականությունների սահմանափակումով ծառայության պարտականությունների ցանկը:

4. 2006 թ-ի կարգի որոշ հիվանդություններ ընդհանրապես հանվել են 2010 թ-ի կարգից: Դրանք են. 2006 թ-ի կարգում 4-րդ, 5-րդ եւ 8-րդ հոդվածներով նախատեսված հիվանդությունները:

Հաշվի առնելով այս հանգամանքը, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետեւյալի մասին.

- արդյո՞ք նման հիվանդություններ ունեցող զորակոչիկները պետք է զորակոչվեն ծառայության
- եթե ոչ, ապա ինչո՞վ է դա պայմանավորված:

5. Որոշակի հիվանդությունների դեպքում նախկինում սահմանված ծառայության համար «ոչ պիտանի» հասկացությունը դարձել է «Զորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն»: Ինչո՞վ է պայմանավորված նման փոփոխությունը: Ի՞նչ տևողություն է ենթադրում այդ ժամանակահատվածը, եւ որքա՞ն ժամանակ հետո զորակոչիկները կարող են պիտանի լինել ծառայության համար նման հիվանդության առկայության դեպքում:


6. Մի շարք հիվանդությունների դեպքում 2006 թ-ի կարգով նախատեսված պիտանելիությունը շարային ծառայությունից 2010 թ-ի կարգով փոխարինվել է ոչ շարային ծառայության: Ինչո՞վ է պայմանավորված տվյալ փոփոխությունը:

7. Բազմաթիվ հիվանդությունների դեպքում 2006 թ-ի կարգում առկա «Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ» արտահայտությունը վերափոխվել է «Զորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի են ծառայությանը սահմանափակումով»: Ի՞նչ է ենթադրում նման փոփոխությունը, 1 տարի ժամկետից հետո ի՞նչ է նախատեսվում եւ ինչո՞ւ է հատկապես սահմանված 1 տարի ժամանակահատված:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքներով՝


կազմակերպության նախագահ



Արթուր Սաքունց

կատարող՝ Ա. Սադիկյան

էլ-փոստ՝ asadikyan@hcav.am





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« 21 » 11 2011 թ.
ՊԿ/ԲԻՈ-ԱԿ - 453

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ»
հասարակական կազմակերպության նախագահ
Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան 11.10.2011 թվականի Ձեր № Ե/2011-279 գրության՝ տեղեկացնում եմ, որ «Զինապարտների բժշկական և զինձառայողների ուղղորդման փորձաքննության կարգը» վերանայվել և լրամշակվել է ՀՀ պաշտպանության նախարարի 19.08.2009թ. թիվ 898 հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից: Արդյունքում վերոնշյալ փորձաքննության կարգը հաստատվել է ՀՀ պաշտպանության նախարարի 2010թ. № 175-Ն հրամանով, որը՝ որպես նորմատիվ իրավական ակտ, գրանցվել և հրապարակվել է համապատասխան պաշտոնական կայքում, ինչը հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին ծանոթության փորձաքննության անցկացման բոլոր մանրամասնություններին՝ դրանով իսկ բարձրացնելով այդ ընթացակարգի թափանցիկության և օրինականության ապահովման մակարդակը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են եղել 14 բժշկական գիտությունների դոկտոր պրոֆեսորներ և 7 բժշկական գիտությունների թեկնածուներ, ովքեր ուղղորդման փորձաքննության ոլորտում երկարամյա փորձ ունեցող և իրենց մասնագիտության ոլորտում ՀՀ ճանաչված մասնագետներ են:

Ըստ ներկայացված հարցերի՝

1-ին կետն ըստ ենթակետերի՝

1-ին ենթակետի վերաբերյալ փոփոխությունը կատարվել է՝ հաշվի առնելով «Հիվանդությունների, վնասվածքների և մահվան դեպքերի» միջազգային դասակարգման X վերանայման (1992թ.) տարբերակը, որը ներկայումս գործում է ՀՀ-ում.

2-րդ ենթակետի վերաբերյալ փոփոխությունը կատարվել է՝ հաշվի առնելով, որ սվյալ քանակակազմի հիվանդների բուժման արդյունքի գնահատման համար պահանջվում է մինչև 3 տարի ժամանակ.

3-րդ ենթակետում «ոչ ակտիվ» արտահայտությունը խմբագրական վրիպակ է, որի մասին ցուցումները տրված են.

4-րդ ենթակետի վերաբերյալ անհրաժեշտ է նշել՝ ավելի ստույգ ո՞ր հոդվածների մասին է խոսքը:

2-րդ կետն ըստ ենթակետերի՝

1-ին ենթակետի վերաբերյալ անհրաժեշտ է նշել՝ ո՞ր հոդվածների մասին է խոսքը.

2-րդ ենթակետի վերաբերյալ՝ յուրաքանչյուր հոդվածի կետերով նախատեսված սահմանափակումների մասին բացատրությունները տրված են հավելված 2-ում՝ ելնելով բժշկական ցուցումներից.

3-րդ կետի վերաբերյալ՝ ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում ներկայումս գործում է զորամասերում ոչ շարային ծառայության հասկացության կիրառումը, մշակված է դրա կարգը.

4-րդ կետի վերաբերյալ՝ կարգի 1-ից՝ ներառյալ 9 հոդվածներն ամբողջովին վերանայվել են, հաշվի առնելով «Հիվանդությունների, վնասվածքների և մահվան դեպքերի» միջազգային դասակարգման X վերանայման (1992թ.) տարբերակը, որը ներկայումս գործում է ՀՀ-ում.


5-րդ կետի վերաբերյալ փոփոխությունը կատարվել է հաշվի առնելով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի պահանջները.

6-րդ կետի վերաբերյալ անհրաժեշտ է նշել՝ ո՞ր հոդվածների մասին է խոսքը.

7-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ մի շարք հիվանդությունների ժամանակ ներկայումս կիրառվող բուժման մեթոդները հնարավորություն են տալիս գնահատել դրա արդյունքներն ավելի վաղ, օրինակ՝ 1 տարի անց: 1 տարի ժամանակը նախատեսված է բժշկական դիտարկման, բուժման և առողջական վիճակի դինամիկ հսկողության համար:

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ
Ք.Հ.Ծ. 2-րդ դասի պետական խորհրդական



Գ. ԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 2.3



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՍԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր - Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hca@hca.am

Ե/2012- 02.03/62
02.03.2012թ .

ՀՀ Պաշտպանության նախարար

Ս. Օհանյանին

Հարգելի պարոն Օհանյան

2011 թ. հոկտեմբերի 11-ին տեղեկատվության հարցմամբ դիմել եմ Ձեզ ստանալու տեղեկատվություն զինապարտների բժշկական և զինճառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ:

Հարցմանն ի պատասխան ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավար Ք. Հ. Օ. 2-րդ դասի պետական խորհրդական Գ. Հայրապետյանը ՊՆ/310-Ադ-453 գրությամբ հայտնել է, որ կազմակերպության Ե/2011-279 հարցման մեջ արձարժված հարցերի վերաբերյալ անհրաժեշտ է ավելի մանրամասն տեղեկատվություն, որը 2011 թ. դեկտեմբերի 9-ին կազմակերպության Ե/2011-09.12/330 գրությամբ հասցեագրվել է Ձեզ: Այնուամենայնիվ, մինչ օրս վերոնշյալ գրությանը պատասխան չի տրամադրվել:

Վերստին , խնդրում եմ տրամադրել կազմակերպության Ե/2011-09.12/330 գրությամբ հայցվող տեղեկատվությունը:

Կից ներկայացնում եմ կազմակերպության Ե/2011-09.12/330 գրության պատճենը:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքներով

կազմակերպության նախագահ՝ Արթուր Սարունց

Գատարող՝ Ա. Ասադիկյան
asadikyan@hca.am





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« 29 » 05 2012թ.
ՊՊՏԻԾ-ՆՊ-258

«ՇԵՆՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան Ձեր 02.03.2012թ. Ե/2012-02.03/62 գրության տեղեկացնում եմ,
որ ՀՀ պաշտպանության նախարարի 2010թ. փետրվարի 26-ի № 175 հրամանով
հաստատված «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական
փորձաքննության կարգը» ՀՀ պաշտպանության և առողջապահության
նախարարությունների գլխավոր մասնագետների հետ համատեղ ներկա պահին գտնվում
է վերանայման փուլում:

«Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական
փորձաքննության կարգի» վերամշակումից և հաստատումից հետո Ձեր բոլոր
հարցադրումներին կտրվի հիմնավոր պատասխան:

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
(Բ.Հ.Ծ. 2-րդ դասի պետական խորհրդական

Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՍԲԼԵԱՑԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2011- 09.12/30
09.12.2011թ.

ՀՀ Պաշտպանության նախարար

Ս. Օհանյանին

Հարգելի պարոն Օհանյան

2011 թ. Հոկտեմբերի 11-ին տեղեկատվության հարցմամբ դիմել եմ Ձեզ ստանալու տեղեկատվություն զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ:

Հարցմանն ի պատասխան ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավար Բ. Հ. Օ. 2-րդ դասի պետական խորհրդական Գ. Հայրապետյանի ՊՆ/310-Ադ-453 գրության, որի վերաբերյալ նեկայացնում եմ կազմակերպության Ե/2011-279 հարցման մեջ արձարծված հարցերի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն:

1. Ներքոնշյալ հիվանդությունների դեպքում 2010 թվականի զինապարտների բժշկական եվ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի մեջ կատարված փոփոխությունը ինչո՞վ է պայմանավորված և ինչո՞վ է հիմնավորվում:
 - 2006 թ-ի կարգում նշված «Տեսողության թուլություն՝ պայմանավորված բեկող միջավայրերի կամ ակնահատակի կայուն փոփոխություններով, ռեֆրակցիայի անոմալիոյով կամ այլ պատճառներով /վնասվածք, օրգանական հիվանդություններ և այլն» 2010 թ-ի կարգում փոփոխվել է «Տեսողության թուլություն, կուրություն»:
 - Ռեֆրակցիայի անոմալիաներ հոդվածի ենթակետերը կրել են փոփոխություններ:
2. Որոշ հիվանդությունների դեպքում ծառայության պիտանելիության բաժնում ըստ 2006 թ-ի գործող կարգի «խաղաղ ժամանակ վերափորձաքննության ենթակա չլինելու» պահանջը հանվել է 2010 թ-ի կարգից: Որոշ հիվանդությունների առկայության դեպքում 2010 թ-ին գորակոչիկը ճանաչվում է ծառայությանը պիտանի սահմանափակումներով, մասնավորապես հետևյալ հիվանդությունների դեպքում.
 - *Մտավոր հետամնացություն* բ/ կետ, այն է՝ թեթև և չափավոր արտահայտված մտավոր հետամնացություն,

- **Անձի խանգարումներ** բ/ կետ, այն է՝ հաճախակի դեկոմպենսացիաներով անձի խանգարումներ, ինչպես նաև կրկնվող իրավիճակային և անձնային ռեակցիաներ, որոնց հաճախությունը մեկ տարվա ընթացքում 3 և ավելի է
- **Կենտրոնական նյարդային համակարգի բնածին արատներ /զարգացման արատներ/, օրգանական զարգացող հիվանդություններ, ինչպես նաև միոպաթից, միասթենիա, մանկական ցերեբրալ կաթված և այլն** բ) կետ՝ ֆունկցիաների չափավոր կամ աննշան խանգարումով կամ դանդաղ զարգացող ընթացքով
- **Մեկ կամ երկու աչքի աֆակիա**


3. Մի շարք հիվանդությունների դեպքում 2006 թ-ի կարգով նախատեսված պիտանելիությունը շարային ծառայությունից 2010 թ-ի կարգով փոխարինվել է **ոչ շարային ծառայության**: Ինչո՞ւ է պայմանավորված տվյալ փոփոխությունը: Այդ հիվանդություններն են.

- **Թոքերի, շնչառական ուղիների <պլեվրայի, ոչ տուբերկուլյոզային բնույթի քրոնիկական հիվանդություններ, զարգացման արատներ, եվ սուր հիվանդություններից հետո կայուն մնացորդային երեվոյթներ** գ) կետ՝ ֆունկցիաների աննշան խանգարումով և հազվադեպ սրացումներով
- **Ակնագնդի շարժիչ նյարդի կայուն կաթված** բ) կետ՝ համագործակցված շլություն 20-ից մինչև 30 աստիճան դեպքում:


Համաձայն ՀՀ սահմանադրության 27 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում եմ տրամադրել տեղեկություն **թե ինչո՞ւ է պայմանավորված նման փոփոխությունը:**

Միաժամանակ խնդրում եմ տրամադրել «Հիվանդությունների, վնասվածքների և մահվան դեպքերի» միջազգային դասակարգման x վերանայման (1992թ.) տարբերակի եւ գորամասերում գործող ոչ շարային ծառայության մշակված կարգի պատճենները:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝  Արթուր Սաբունց

Գատարող՝ Ա. Զայան
azalyan@hcav.am



Հավելված 3

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Հիվանդությունների և ֆիզիկական թերությունների անվանումը		Պիտանիությունը	
Փոփոխված հոդվածը 2006 թ.	Փոփոխության բնույթը ըստ 2010 թ-ի ցանկի	2006 ՀՀ պաշտպանության նախարարի 2006 թ. մարտի 30-ի N 378 հրաման	2010 ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թ. փետրվարի 26-ի N 175 հրաման
1.	ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆ	1. ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆ	
բ) թեթև և չափավոր արտահայտված մտավոր հետամնացություն	բ) չափավոր և թեթև աստիճանի մտավոր հետամնացություն՝ վարքային խանգարումներով	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ, ենթակա չեն վերափորձաքննության խաղաղ ժամանակ	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
գ) սոցմանկավարժական բարձր լիճակներ	գ) թեթև աստիճանի այլ մտավոր հետամնացություն՝ առանց վարքային խանգարումների	Պիտանի են շարային ծառայության, ծառայողական պարտականությունների սահմանափակումով	Պիտանի են սահմանափակումով
2.	ԱՖԵԿՏԻՎ ՓՄԻՆՈՋՆԵՐ	4. ԱՖԵԿՏԻՎ ՓՄԻՆՈՋՆԵՐ	
ա) խիստ արտահայտված ձևերը հիվանդության հաճախակի կրկնվող շրջաններով կամ ձգձգվող նույններով	ա) հաճախակի կրկնվող, կարճատև ռեմիսիաներով ընթացող աֆեկտիվ խանգարումներ (երկբևեռ աֆեկտիվ խանգարումներ, հետադարձ դեպրեսիվ խանգարումներ)	Պիտանի չեն և հանվում են զինվորական հաշվառումից	Պիտանի չեն՝ հանելով զինվորական հաշվառումից
բ) հազվադեպ նույններ՝ հոգեկան լիակատար առողջության երկարատև /մի քանի տարի/ ընդմիջումներով	բ) երկարատև ռեմիսիայով ընթացող աֆեկտիվ խանգարումներ, ծանր մանիակալ և դեպրեսիվ էպիզոդներ՝ փսիխոտիկ խանգարումներով,	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ, ենթակա չեն վերափորձաքննության խաղաղ ժամանակ	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ

		ձգձգվող ընթացքով, տրամադրության քրոնիկական խանգարումներ		
		զ) չափավոր և թեթև արտահայտված մանիակալ և դեպրեսիվ էպիզոդներ		Զորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի են ծառայությանը սահմանափակումով
0		2. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ		
3.	ՇԻԶՈՏՐԵՆԻԱ /մտագարություն/	3. ՇԻԶՈՏՐԵՆԻԱ, ՇԻԶՈՏԻՊԱՅԻՆ ԵՎ ԶԱՌԱՆՑԱՆՔԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ	Պիտանի չեն և հավում են զինվորական հաշվառումից	
		ա) շիզոֆրենիա (անկախ ձևից, ընթացքից, էլքից), քրոնիկական գառանցանքային խանգարումներ		Պիտանի չեն՝ հանելով զինվորական հաշվառումից
		բ) շիզոաֆեկտիվ խանգարումներ, շիզոտիպային խանգարումներ		Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
4.	ԳԼԽՈՒՂԵՂԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՈՒՐ ԵՎ ԽՐՈՆԻԿ ԻՆՏՈՔՍԻԿԱՑԻԱՆԵՐԻ, ՎԱՐԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ	ՀԱՆՎԱԾ Է		
	ա) խիստ արտահայտված, հոգեկան կայուն խանգարումներով		Պիտանի չեն և հանվում են զինվորական հաշվառումից	
	բ) չափավոր արտահայտված, հոգեկան կայուն խանգարումներով		Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ	
	գ) օրգանական ծագման փսիխոտիկ վիճակներից լրիվ լավացում		Պիտանի են շարային ծառայությանը ծառայողական պարտականությունների սահմանափակումով, զինակոչիկներին տրվում է տարկետում մինչև 1 տարի ժամանակով	
5.	ՊԱՐԱՆՈՒԴ /խելացնոր/ ՎԻՃԱԿՆԵՐ, ՄԻՄՊՏՈՄԱՏԻԿ ԵՎ ՈՉ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՅԼ ՓՄԻՆՈՋՆԵՐ	ՀԱՆՎԱԾ Է		
	ա) խիստ արտահայտված, կայուն հոգեկան խանգարումներով		Պիտանի չեն և հանվում են զինվորական հաշվառումից	
	բ) չափավոր արտահայտված և երկարատև ասթենիկ վիճակ, անձի		Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար	

	ախտաբանական փոփոխություններ առանց նյարդային համակարգի օրգանական ախտահարման		պատերազմական ժամանակ	
	զ) սուր ռեակտիվ վիճակներ		Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ արձակուրդ	
0		5.ՍՈՒՐ ԵՒ ԱՆՅՈՂԻԿ ՓՄԻՆՈՏԻԿ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ԶՆԵՐԱՌՈՒՄ Է ՊԱՐԱՆՈՒԴ ՌԵԱԿՑԻԱ, ՓՄԻՆՈԳԵՆ ՊԱՐԱՆՈՒԴ ՓՄԻՆՈԶ, ՌԵԱԿՏԻՎ ՓՄԻՆՈԶ, ՕՆԵՅՐՈՖՐԵՆԻԱ, ԶԱՌԱՆՑԱՆՔԱՅԻՆ ԲՈՆԿՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՅԼՆ		
0		6. ԱԽՏԱՆՇԱՆԱՅԻՆ ԵՒ ԱՅԼ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ		
0		7. ՆԵՒՐՈՏԻԿ, ՍԹՐԵՍՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՒ ՍՈՄԱՏՈՖՈՐՄ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ		
6.	ԱՆՁԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ	8.ԱՆՁՆԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ		
	ա) դեկոմպենսացիայով	ա)արտահայտված, կոմպենսացիայի չենթարկվող	Պիտանի չեն և հանվում են զինվորական հաշվառումից	Պիտանի չեն՝ հանելով զինվորական հաշվառումից
	բ) կոմպենսացիայով	բ) հաճախակի դեկոմպենսացիաներով անձի խանգարումներ, ինչպես նաև կրկնվող իրավիճակային և անձնային ռեակցիաներ, որոնց հաճախությունը մեկ տարվա ընթացքում 3 և ավելի է	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի է ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ, ենթակա չեն վերափորձաքննության խաղաղ ժամանակ	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
7.	ՆԵՎՐՈԶՆԵՐ, ՌԵԱԿՏԻՎ ՓՄԻՆՈԶՆԵՐ, ՀԵՏՍԹՐԵՍԱՅԻՆ ՍՈՒՐ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ, ԱՂԱՊՏԱՑԻՈՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ /հարբեցողություն, թմրամոլություն, թունամոլություն/	9.ՀՈԳԵԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՀՈԳԵԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՈՐԾԱԾԱՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ		
	ա) հաճախակի դեկոմպենսացիաներով, ցայտուն և կատուն հիվանդագին	ա) քրոնիկական փսիխոտիկ խանգարումներ, քրոնիկական ալկոհոլիզմ, նարկոմանիա և	Պիտանի չեն և հանվում են զինվորական հաշվառումից	Պիտանի չեն՝ հանելով զինվորական հաշվառումից

	արտահայտություններով	տոքսիկոմանիա, անձի արտահայտված փոփոխություններով և ինտելեկտուալ-ամենստիկ խանգարումներով		
	բ) չափավոր արտահայտված, բայց երկարատև հիվանդագին արտահայտություններով	բ) սուր փսիխոտիկ խանգարումներ, քրոնիկական ալկոհոլիզմ, նարկոմանիա և տոքսիկոմանիա՝ չափավոր կամ թեթև արտահայտված անձի փոփոխություններով և այլ բարդություններով (սոմատիկ և հոգեկան)	Պիտանի իչն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, /ինչ է ենթադրում, ինչ է լինելու 1 տարուց հետո/զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
	գ) օրգանական հիմք չունեցող թեթև ու կարճատև փսիխոտիկ խանգարումներ լրիվ լավացումով	գ) հոգեակտիվ նյութերի չարաշահում (կրկնակի օգտագործում առանց կախվածության համախտանիշի), որոնք զուգորդվում են հոգեկան և ֆիզիկական հետևանքներով, բուժումից հետո	Պիտանի են զինվորական ծառայությանը ծառայողական պարտականությունների սահմանափակումով	Պիտանի են ոչ շարային ծառայության
	դ) կարճատև /1-3 օր տևողությամբ/ փսիխոտիկ ռակցիաները	դ) էպիզոդիկ օգտագործում, որոնք չեն առաջացնում հոգեկան և ֆիզիկական հետևանքներ (առանձին ախտանշաններ) /թոթոխության իմաստը, ունեն ընդհանուր բաներ եւ ինչու՞մն է կայանում/	Պիտանի չեն և հանվում են զինվորական հաշվառումից	Պիտանի են շարային ծառայության /ինչով է պայմանավորված շարայինի պայմանը/
8.	ԳԼԽՈՒՂԵՂԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ	ՀԱՆՎԱԾ Է		
	ա) խիստ արտահայտված հոգեկան խանգարումներով		Պիտանի չեն և հավում են զինվորական հաշվառումից	
	բ) չափավոր արտահայտված հոգեկան խանգարումներով		Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ	
ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ				
9.	ԷՊԻԼԵՊՍԻԱ	10. ԷՊԻԼԵՊՍԻԱ		

10.	ԳԼԽՈՒՂԵՂԻ ԵՎ ՈՂՆՈՒՂԵՂԻ ԱՆՈԹԱՅԻՆ 11. ԳԼԽՈՒՂԵՂԻ ԵՎ ՈՂՆՈՒՂԵՂԻ ԱՆՈԹԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
	բ) ֆունկցիաների չափավոր խանգարումներով	բ) ֆունկցիաների չափավոր խանգարումներով	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ	Ձորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
	գ) առանց ֆունկցիաների խանգարման կամ ֆունկցիաների աննշան խանգարումներով	գ) առանց ֆունկցիաների խանգարման կամ ֆունկցիաների աննշան խանգարումով	Պիտանի են	Պիտանի են ոչ շարային ծառայության
11.	ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐԱԿԻՉ /մանրէային, վիրուսային/ ԵՎ ՎԱՐԱԿԻՉ-ԱԼԵՐԳԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ԳԼԽՈՒՂԵՂԻ ԵՎ ՈՂՆՈՒՂԵՂԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԱԿՆԵՐԻ, ՍՈՒՐ ԵՎ ԽՐՈՆԻԿ ԻՆՏՈՔՍԻԿԱՑԻԱՆՐԻ ԺԱՄԱՆԱԿ			
	բ) ֆունկցիաների չափավոր կամ աննշան խանգարումով	բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ	Ձորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
12.	ԳԱՆԳՈՒՂԵՂԻ ԵՎ ՈՂՆՈՒՂԵՂԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ			
	բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով	բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով	Պիտանի չեն խաղաղ խամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ	Ձորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն: Զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
	դ) վիճակ՝ սուր, բաց և փակ		Ձորակոչիկներին՝ տարկետում,	

		վնասվածքից հետո՝ առանց օրգանական ախտահարման երևույթների		զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
13.	ԿԵՆՏՐՈՆԱԿՆ ԼՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՆԱԾԻՆ ԱՐԱՏՆԵՐ /ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԱՏՆԵՐ/, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ԼԱԵՎ ՄԻՈՊԱԹԻՑ, ՄԻԱՍԹԵՆԻԱ, ՄԱՆԿԱԿԱՆ ՑԵՐԵԲՐԱԼ ԿԱԹՎԱԾ ԵՎ ԱՅԼՆ	14. ԿԵՆՏՐՈՆԱԿՆ ԼՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՆԱԾԻՆ ԱՐԱՏՆԵՐ /ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԱՏՆԵՐ/, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ԼԱԵՎ ՄԻՈՊԱԹԻՑ, ՄԻԱՍԹԵՆԻԱ, ՄԱՆԿԱԿԱՆ ՑԵՐԵԲՐԱԼ ԿԱԹՎԱԾ ԵՎ ԱՅԼՆ		
	բ) ֆունկցիաների չափավոր կամ աննշան խանգարումով կամ դանդաղ զարգացող ընթացքով	բ) ֆունկցիաների չափավոր կամ աննշան խանգարումով կամ դանդաղ զարգացող ընթացքով	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ, ենթակա չեն վերափորձաքննության խաղաղ ժամանակ	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
14	ՊԵՐԻՖԵՐԻԿ ԼՅԱՐԴԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	15. ՊԵՐԻՖԵՐԻԿ ԼՅԱՐԴԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ		
	բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով	բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ	Զորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
	դ) վիճակ պերիֆերիկ նյարդերի վնասվածքից կամ վիրահատությունից հետո	դ) վիճակ պերիֆերիկ նյարդերի վնասվածքից կամ վիրահատությունից հետո	Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Զորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
15	ՊԵՐԻՖԵՐԻԿ ԼՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՍ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	16. ՊԵՐԻՖԵՐԻԿ ԼՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՍ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ		
ՆԵՐՔԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ				

19.	ՆԵՐՁԱՏԻՉ ՀԱՄԱԿՐԳԻ ԵՎ ՆՈՅԻԹԱՓՈՒԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ	20. ՆԵՐՁԱՏԻՉ ՀԱՄԱԿՐԳԻ ԵՎ ՆՈՅԻԹԱՓՈՒԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
	բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով	բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով	Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ	Ձորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ
	դ) վիճակ՝ սուր հիվանդություններից և վիրահատական միջամտություններից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումներով	դ) վիճակ՝ սուր հիվանդություններից և վիրահատական միջամտություններից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումներով	Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Ձորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
20.	ԱՐՅԱՆ ՀԱՄԱԿՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ /սակավարյունություն, ագրանուլոցիտոզ, հեմոբլաստոզներ, լիմֆոգրանուլեմատոզ, հեմոռագիկ դիսթեզներ և այլն/	21. ԱՐՅԱՆ ՀԱՄԱԿՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ /սակավարյունություն, ագրանուլոցիտոզ, հեմոբլաստոզներ, լիմֆոգրանուլեմատոզ, հեմոռագիկ դիսթեզներ և այլն/		
	զ) ստացիոնար բուժում չպահանջող չափավոր արտահայտված երկրորդային սակավարյունություն, լեյկոպենիա, տրոմբոցիտոպենիա, վիճակ ճառագայթային ու ցիտոստատիկ բուժումից հետո և այլն	զ) ստացիոնար բուժում չպահանջող չափավոր արտահայտված երկրորդային սակավարյունություն, լեյկոպենիա, տրոմբոցիտոպենիա, վիճակ ճառագայթային ու ցիտոստատիկ բուժումից հետո և այլն	Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Ձորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
21.	ԷԿՁՈԳԵՆ ՍՈՒՐ ԿԱՄ ՔՐՈՆԻԿԱԿՆ ԻՆՏՈՔՍԻԿԱՅԻԱՆՐԻ ՍՐԱՅՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ, ԱԼԵՐԳԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ	22. ԷԿՁՈԳԵՆ ՍՈՒՐ ԿԱՄ ՔՐՈՆԻԿԱԿՆ ԻՆՏՈՔՍԻԿԱՅԻԱՆՐԻ ՍՐԱՅՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ, ԱԼԵՐԳԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
	բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով	բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար	Ձորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն,

			պատերազմական ժամանակ	զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
	զ) սուր ինտոքսիկացիաներից կամ ազդեցություններից հետո, ժամանակավոր ֆունկցիոնալ խանգարումներ, ստացիոնար բուժում չպահանջող մնացորդային երևույթներ	զ) սուր ինտոքսիկացիաներից կամ ազդեցություններից հետո, ժամանակավոր ֆունկցիոնալ խանգարումներ, ստացիոնար բուժում չպահանջող մնացորդային երևույթներ	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
22.	ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋ	23. ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋ		
	զ) ակտիվ մարող	զ) ակտիվ՝ մարող, ոչ ակտիվ	Պիտանի չեն խաղաղ խամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ	Ջորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
	դ) ոչ ակտիվ	դ) ոչ ակտիվ	Պիտանի չեն խաղաղ խամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ	Ջորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
23.	ԹՈՔԵՐԻ, ՇՆՉԱՌԱԿՆ ՈՒՂԻՆԵՐԻ< ՊԼԵՎՐԱՅԻ, ՈՉ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԱՏՆԵՐ, ԵՎ ՍՈՒՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ԿԱՅՈՒՆ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ	24. ԹՈՔԵՐԻ, ՇՆՉԱՌԱԿՆ ՈՒՂԻՆԵՐԻ< ՊԼԵՎՐԱՅԻ, ՈՉ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԱՏՆԵՐ, ԵՎ ՍՈՒՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ԿԱՅՈՒՆ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ		
	զ) ֆունկցիաների աննշան խանգարումով և հազվադեպ սրացումներով)	զ) ֆունկցիաների աննշան խանգարումով և հազվադեպ սրացումներով)	Պիտանի են շարային ծառայության	Պիտանի են ոչ շարային ծառայության /ինչից ելնելով է փխվել շարայինը ոչ շարայինի/
	դ) հիվանդի ստացիոնար բուժում չպահանջող, սուր հիվանդությունների ժամանակավոր ֆունկցիոնալ	դ) հիվանդի ստացիոնար բուժում չպահանջող, սուր հիվանդությունների	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական

	մնացորդային երևույթներով վիճակ	Ժամանակավոր ֆունկցիոնալ մնացորդային երևույթներով վիճակ	արձակուրդ	պարտականություններից ազատում կամ արձակուրդ
24.	ԲՐՈՂՆԻՒԱԼ ԱՍԹՄԱ	25. ԲՐՈՂՆԻՒԱԼ ԱՍԹՄԱ		
	զ) թեթև աստիճանի ծանրության ձևեր՝ հազվադեպ նոպաներով	զ) թեթև աստիճանի ծանրության ձևեր՝ հազվադեպ նոպաներով	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
25.	Սրտամկանի, սրտապարկի (պերիկարդի), պսակաձև անոթների, փականային ապարատի, աորտայի հիվանդություններ և զարգացման արատներ	26. Սրտամկանի, սրտապարկի (պերիկարդի), պսակաձև անոթների, փականային ապարատի, աորտայի հիվանդություններ և զարգացման արատներ		
	զ) աննշան արտահայտված	զ) աննշան արտահայտված	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
26.	Զարկերակային հիպերտենզիա	27. Զարկերակային հիպերտենզիա		
	բ) II շրջան	բ) II շրջան	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
28.	Պարբերական հիվանդություն	29. Պարբերական հիվանդություն		
		զ) ըստ անամնեզի /ինչումն է կայանում այս կետի ավելացման հիմնավորումը էի ինչի ինչի Պիտանի են ոչ շարային ծառայության համար, երբ առաջին երկու կետերը ոչ պիտանի են /		Պիտանի են ոչ շարային ծառայության համար
29.	Որովայնի խոռոչի օրգանների հիվանդություններ և զարգացման արատներ	30. Որովայնի խոռոչի օրգանների հիվանդություններ և զարգացման արատներ		

	դ) սուր հիվանդություններից հետո	դ) սուր հիվանդություններից հետո	Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Զորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
30.	Երիկամների բորբոքային և դիստրոֆիկ հիվանդություններ	31. Երիկամների բորբոքային և դիստրոֆիկ հիվանդություններ		
	զ) վիճակ սուր հիվանդություններից հետո՝ ստացիոնար բուժում չպահանջող, ժամանակավոր բնույթ կրող	զ) վիճակ սուր հիվանդություններից հետո՝ ստացիոնար բուժում չպահանջող, ժամանակավոր բնույթ կրող	Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Զորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
31.	Շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, այդ թվում՝ հողերի, մկանների, ջլերի վարակիչ, վարակիչ-ալերգիկ և դիստրոֆիկ հիվանդություններ	32. Շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, այդ թվում՝ հողերի, մկանների, ջլերի վարակիչ, վարակիչ-ալերգիկ և դիստրոֆիկ հիվանդություններ		
	դ) սուր հիվանդություններից հետո ստացիոնար բուժում չպահանջող մնացորդային երևույթներ	դ) սուր հիվանդություններից հետո ստացիոնար բուժում չպահանջող մնացորդային երևույթներ	Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Զորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
32.	Մաշկի սպիներ	33. Մաշկի սպիներ		
	բ) շարժումները չափավոր սահմանափակող կամ հագուստ, կոշիկ կամ հանդերձանք կրելուն չափավոր խանգարող	բ) շարժումները չափավոր սահմանափակող կամ հագուստ, կոշիկ կամ հանդերձանք կրելուն չափավոր խանգարող	Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
	դ) հիվանդության, վնասվածքի պատճառով կամ վիրահատությունից հետո չամրացած	դ) հիվանդության, վնասվածքի պատճառով կամ վիրահատությունից հետո չամրացած	Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Զորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
33.	Կրծքավանդակի կամ որովայնի խոռոչի, փոքր կոնքի կամ հետորովայնամզային տարածքի	34 Կրծքավանդակի կամ որովայնի խոռոչի, փոքր կոնքի կամ հետորովայնամզային տարածքի		

	օրգանների վնասվածքների, վերքերի կամ վիրաբուժական միջամտությունների հետևանքներ	օրգանների վնասվածքների, վերքերի կամ վիրաբուժական միջամտությունների հետևանքներ		
	դ) հիվանդի ստացիոնար բուժում չպահանջող ֆունկցիայի ժամանակավոր խանգարումով	դ) հիվանդի ստացիոնար բուժում չպահանջող ֆունկցիայի ժամանակավոր խանգարումով	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
37.	Ոսկրերի, աճառների, մկանների, ջլերի ու հոդերի քրոնիկական բնածին արատներ, վնասվածքներ, դրանց հետևանքներ և քրոնիկական հիվանդություններ	38. Ոսկրերի, աճառների, մկանների, ջլերի ու հոդերի քրոնիկական բնածին արատներ, վնասվածքներ, դրանց հետևանքներ և քրոնիկական հիվանդություններ		
	դ) հենաշարժիչ ապարատի ֆունկցիայի ժամանակավոր խանգարում վնասվածքից կամ վիրահատությունից հետո, չամրացած ոսկրային կոշտուկ	դ) հենաշարժիչ ապարատի ֆունկցիայի ժամանակավոր խանգարում վնասվածքից կամ վիրահատությունից հետո, չամրացած ոսկրային կոշտուկ	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
44.	Խպիպ	45. Խպիպ		
	բ) հագուստի կրելը դժվարացնող	բ) հագուստի կրելը դժվարացնող	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
45.	Չարորակ նորագոյացություններ	46. Չարորակ նորագոյացություններ		
	բ) արմատական հեռացման հետևանքներ՝ առանց մոտակա և հեռակա մետաստազների	բ) արմատական հեռացման հետևանքներ՝ առանց մոտակա և հեռակա մետաստազների	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ջորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
46.	Բարորակ նորագոյացություններ և պարազիտար կիստաներ	47. Բարորակ նորագոյացություններ և պարազիտար կիստաներ		
	դ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր	դ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝

	խանգարումով	ժամանակավոր խանգարումով	պարտականություններից ազատում կամ արձակուրդ	զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
47.	Առրտայի, մագիստրալ, պերիֆերիկ անոթների հիվանդություններ, հիվանդությունների և վնասումների հետևանքներ (անևրիզմներ, անոթները խցանող հիվանդություններ, ֆլեբոթրոմբոզներ և թրոմբոֆլեբիտներ, վարիկոզ հիվանդություն, հետթրոմբոտիկ հիվանդություն, անգիոտրոֆոններոզներ և հեմանգիոմաներ)	48. Առրտայի, մագիստրալ, պերիֆերիկ անոթների հիվանդություններ, հիվանդությունների և վնասումների հետևանքներ (անևրիզմներ, անոթները խցանող հիվանդություններ, ֆլեբոթրոմբոզներ և թրոմբոֆլեբիտներ, վարիկոզ հիվանդություն, հետթրոմբոտիկ հիվանդություն, անգիոտրոֆոններոզներ և հեմանգիոմաներ)		
	զ) արյան շրջանառության և օրգանների կամ վերջույթների ֆունկցիաների չափավոր խանգարումով	զ) արյան շրջանառության և օրգանների կամ վերջույթների ֆունկցիաների չափավոր խանգարումով	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
48.	Աճուկային, ազդրային, հետվիրահատական և այլ ճողվածքներ	49. Աճուկային, ազդրային, հետվիրահատական և այլ ճողվածքներ		
	բ) միջին չափերի՝ քայլքը դժվարացնող կամ ներքին օրգանների ֆունկցիան չափավոր խանգարող	բ) միջին չափերի՝ քայլքը դժվարացնող կամ ներքին օրգանների ֆունկցիան չափավոր խանգարող	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
51.	Քրոնիկական պարապրոկտիտ	52. Քրոնիկական պարապրոկտիտ		
	բ) ոչ կայուն կամ երբեմն բացվող խուղակներով, հազվադեպ սրացումներով	բ) ոչ կայուն կամ երբեմն բացվող խուղակներով, հազվադեպ սրացումներով	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
	դ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումով	դ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումով	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական

			արձակուրդ	պարտականություններից ազատում կամ արձակուրդ
52. Թուֆթ	53. Թուֆթ			
ա) հաճախակի արյունահոսություններով և երկրորդային սակավարյունությամբ	ա) հաճախակի արյունահոսություններով և երկրորդային սակավարյունությամբ		Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ձորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
55 Սերմնալարի երակների վարիկոզ լայնացում	56. Սերմնալարի երակների վարիկոզ լայնացում			
ա) արյան շրջանառության խիստ խանգարումով և ցավային համախտանիշով	ա) արյան շրջանառության խիստ խանգարումով և ցավային համախտանիշով		Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ձորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
56. Ամորձու թաղանթների և սերմնալարի ջրգողություն	57. Ամորձու թաղանթների և սերմնալարի ջրգողություն			
գ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումով	գ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումով		Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Ձորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
ԱԿԱՆՋԻ, ՎԵՐԻՆ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՈՒՂԻՆՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՈՒՆՆԵՐ				
67. Խոսքի արատներ, ձայնագոյացման խանգարումներ	68. Խոսքի արատներ, ձայնագոյացման խանգարումներ			
բ) խոսքը ոչ լրիվ հասկանալի դարձնող չափավոր կակազություն կամ թլվատություն	բ) խոսքը ոչ լրիվ հասկանալի դարձնող չափավոր կակազություն կամ թլվատություն		Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ձորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
ԲԵՐԱՆԻ ԽՈՌՈՉԻ ԵՎ ԾՆՈՏՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
69. Դիմաձևտային շրջանի հյուսվածքների և օրգանների բնածին և ձեռքբերովի արատներ, ձևախախտումներ և հիվանդություններ	70. Դիմաձևտային շրջանի հյուսվածքների և օրգանների բնածին և ձեռքբերովի արատներ, ձևախախտումներ և հիվանդություններ			

	ա) շնչառական, հոտառական, ծամելու, թքարտադրության ֆունկցիաների խիստ արտահայտված խանգարումով	ա) շնչառական, հոտառական, ծամելու, թքարտադրության ֆունկցիաների խիստ և չափավոր արտահայտված խանգարումով	Պիտանի չեն և հանվում են զինվորական հաշվառումից	Ձորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
	բ) շնչառական, հոտառական, ծամելու, թքարտադրության ֆունկցիաների չափավոր խանգարումով	ա) շնչառական, հոտառական, ծամելու, թքարտադրության ֆունկցիաների խիստ և չափավոր արտահայտված խանգարումով	Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ձորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
	գ) շնչառական, հոտառական, ծամելու, թքարտադրության ֆունկցիաների աննշան խանգարումով	բ) շնչառական, հոտառական, ծամելու, թքարտադրության ֆունկցիաների աննշան խանգարումով	Պիտանի են ոչ շարային ծառայության	Պիտանի են սահմանափակումով
71.	Ատամների, պարոդոնտի և բերանի խոռոչի լորձաթաղանթի հիվանդություններ	72. Ատամների, պարոդոնտի և բերանի խոռոչի լորձաթաղանթի հիվանդություններ		
	ա) պարոդոնտիտ, ծանր, ընդհանուր պարոդոնտոզ, ստոմատիտ, գինգիվիտ, խելյիտ և բերանի լորձաթաղանթի, թքագեղձերի և լեզվի այլ հիվանդություններ, որոնք չեն բուժվում: Ընդհանուր, միջին աստիճանի պարոդոնտիտ, պարոդոնտոզ	ա) միջին և ծանր աստիճանի տարածուն պարոդոնտիտ, ստոմատիտ, գինգիվիտ, խելյիտ և բերանի լորձաթաղանթի, թքագեղձերի և լեզվի այլ հիվանդություններ, որոնք չեն բուժվում	Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ձորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
	գ) բազմաթիվ ատամների բարդացած ոսկրափուտ (կարիես)	գ) բազմաթիվ ատամների բարդացած ոսկրափուտ (կարիես)	Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ բուժում	Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ պայմանավորված/
ԱՉՔԻ ԵՎ ՆՐԱ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՈՒՆՆԵՐ				
76.	Ակնագնդի շարժիչ նյարդի կայուն կաթված	77. Ակնագնդի շարժիչ նյարդի կայուն կաթված		
	ա) դիպլոպիայով՝ անկախ շլության անկյան չափից, կամ առանց դիպլոպիայի շլության անկյան 30 աստիճան ավելի	ա) ակնագնդի շարժիչ մկանների կայուն կաթված, համագործակցված շլություն 30 աստիճան և ավելի, կայուն	Ձորակոչիկները՝ տարկետում, զինծառայողներ՝ պիտանի չեն ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ձորակոչիկները՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներ՝ պիտանի չեն ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ

		դեպլոպիա		
	բ) առանց դիպլոպիայի, ակնագնդի մկանների հստակ արտահայտված տատանվող սպազմ, փոխկապակցված կամ համակից շլություն	բ) համագործակցված շլություն 20-ից մինչև 30 աստիճան	Պիտանի են	Պիտանի են ոչ շարային ծառայության
		գ) ակնագնդի հստակ արտահայտված տատանվող սպազմ (նիստագմ), համագործակցված շլություն մինչև 20 աստիճան		Պիտանի են ոչ շարային ծառայության
79.	Մեկ կամ երկու աչքի աֆակիա	80 Մեկ կամ երկու աչքի աֆակիա	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ, ենթակա չն վերափորձաքննության խաղաղ ժամանակ	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
84.	Տեսողության թուլություն՝ պայմանավորված բեկող միջավայրերի կամ ակնահատակի կայուն փոփոխություններով, ռեֆրակցիայի անոմալիոյով կամ այլ պատճառներով /վնասվածք, օրգանական հիվանդություններ և այլն/	85 Տեսողության թուլություն, կուրություն		
85.	Ռեֆրակցիայի անոմալիաներ	86. Ռեֆրակցիայի անոմալիաներ		
	ա) մեկ աչքի կարճատեսություն կամ հեռատեսություն որևէ առանցքով՝ 12.0 D-ից ավելի <hr/> դ) երկու աչքի ցանկացած տիպի աստիգմատիզմ՝ 2 գլխավոր առանցքների միջև 6.0 D ավելի ռեֆրակցիայի տարբերությամբ	ա) կարճատեսություն կամ հեռատեսություն մեկ աչքի որևէ առանցքով 12,0 D-ից ավելի, կամ աստիգմատիզմ պարզ միոպիկ կամ բարդ միոպիկ կամ խառը 2 գլխավոր առանցքների միջև ռեֆրակցիայի տարբերությամբ երկու աչքում 6,0 D-ից ավելի	ա/Պիտանի չեն՝ հանելով զինվորական հաշվառումից <hr/> դ/ Պիտանի չեն՝ հանելով զինվորական հաշվառումից	Պիտանի չեն՝ հանելով զինվորական հաշվառումից <hr/>
	բ) մեկ աչքի որևէ առանցքով կարճատեսություն 6.0-12.0 D կամ հեռատեսություն որևէ առանցքով՝ 7.0-12.0 D, կամ երկու հեռատեսություն՝ 6.5-12.0 D /ինչի հիման վրա է երկու	բ) կարճատեսություն մեկ աչքի որևէ առանցքով 6,0-12,0 D կամ հեռատեսություն մեկ աչքի որևէ առանցքով 7,5-12,0 D	Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Զորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ

	հեռատեսություն՝ 6.5-12.0 D հանված/			
զ) մեկ աչքի կամ որևէ առանցքով կարճատեսություն՝ 3.5-5.5 D, կարճատեսությունցկամ հեռատեսություն մեկ այլ աչքի որևէ առանցքով՝ 5.0-6.5 D	զ/ բարդ միոպիկ կամ խառը 2 գլխավոր առանցքների միջև ռեֆրակցիայի տարբերությամբ երկու աչքում 3,5-6,0 D կամ մեկ աչքում 4,0 D և ավելի: Պարզ կամ բարդ հիպերմետրոպիկ աստիգմատիզմ 2 գլխավոր առանցքների միջև ռեֆրակցիայի տարբերությամբ մեկ կամ երկու աչքում 4,5 D և ավելի /ակնաբույժի հետ խոսել/	Պիտանի են	Ջորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինձառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	
	դ) հեռատեսություն մեկ կամ երկու աչքի որևէ առանցքով 6,0-7,0 D կամ աստիգմատիզմ պարզ միոպիկ, բարդ միոպիկ կամ խառը 2 գլխավոր առանցքների միջև ռեֆրակցիայի տարբերությամբ երկու աչքում 3,0 D կամ մեկ աչքում 3,5 D: Պարզ կամ բարդ հիպերմետրոպիկ աստիգմատիզմ 2 գլխավոր առանցքների միջև ռեֆրակցիայի տարբերությամբ մեկ կամ երկու աչքում 4,0 D		Պիտանի են ոչ շարային ծառայության	
ե) երկու աչքերի ցանկացած տիպի աստիգմատիզմ՝ 2 գլխավոր առանցքների միջև ռեֆրակցիայի տարբերությամբ 3.5-6.0 D, կամ մեկ աչքում 4.0 D և ավելի	ե) կարճատեսություն մեկ աչքի որևէ առանցքով 5,0-5,5 D	Ջորակոչիկներին՝ տարկետում, զինձառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ջորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինձառայողները՝ պիտանի են ոչ շարային ծառայության	
զ) զույգ կամ մեկ աչքի ցանկացած տիպի աստիգմատիզմ՝ 2 գլխավոր առանցքների միջև ռեֆրակցիայի տարբերությամբ մինչև 3.0 D	զ) կարճատեսություն մեկ աչքի որևէ առանցքով 3,5-4,5 D կամ հեռատեսություն մեկ աչքի որևէ առանցքով 3,5-5,5 D կամ աստիգմատիզմ պարզ միոպիկ, բարդ միոպիկ կամ խառը 2 գլխավոր առանցքների միջև ռեֆրակցիայի տարբերությամբ երկու աչքում 2,0-2,5 D կամ մեկ	Պիտանի են	Պիտանի են շարային ծառայության	

		աչքում 2,0-3,0 D կամ պարզ կամ բարդ հիպերմետրոպիկ աստիգմատիզմ 2 գլխավոր առանցքների միջև ռեֆրակցիայի տարբերությամբ մեկ կամ երկու աչքում 2,0-3,5 D		
87.	Աչքի ֆունկցիայի ժամանակավոր խանգարումներ	88. Աչքի ֆունկցիայի ժամանակավոր խանգարումներ	Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Ձորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ

ՄԱՇԿԻ ԵՎ ԵՆԹԱՄԱՇԿԱՅԻՆ ԲՁՋԱՆՔԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

89.	Շարակցական հյուսվածքի տարածուն հիվանդություններ մաշկային ծածկույթի ախտահարման գերակայությամբ՝ կարմիր գայլախտ (սկավառակային), սկլերոդերմիա (օջախային), դերմատոմիոզիտ, նեյրոֆիբրոմատոզ, (պիգմենտախալային ձև), կայցինոզ, լեյոմիոմա, լիպոհոլային նեկրոբիոզ	90. Շարակցական հյուսվածքի տարածուն հիվանդություններ մաշկային ծածկույթի ախտահարման գերակայությամբ՝ կարմիր գայլախտ (սկավառակային), սկլերոդերմիա (օջախային), դերմատոմիոզիտ, նեյրոֆիբրոմատոզ, (պիգմենտախալային ձև), կայցինոզ, լեյոմիոմա, լիպոհոլային նեկրոբիոզ	Պիտանի չեն և հանվում են զինվորական հաշվառումից	Ձորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
91.	Մուր մաշկային և լորձաթաղանթային հիվանդություններ, այդ թվում՝ վարակիչ. - հասարակ և ալերգիկ կոնտակտային մաշկաբորբեր, թունամաշկաբորբ, խեյլիտ, ստրեպտո-ստաֆիլոդերմիաներ, թարախածին գրանուլյոմա, կարմիր քամի, էրիթրազմա, բազմաձև արտաքիրտային (էքսուդատիվ) էրիթեմա, հասարակ քիթ-շրթունքային որքին (հերպես), հպավարակիչ մոլյուսկ - քոս, ոջլոտություն, լեյշմանիոզ, ֆլեբոտոդերմիա	92. Մուր մաշկային և լորձաթաղանթային հիվանդություններ, այդ թվում՝ վարակիչ. - հասարակ և ալերգիկ կոնտակտային մաշկաբորբեր, թունամաշկաբորբ, խեյլիտ, ստրեպտո-ստաֆիլոդերմիաներ, թարախածին գրանուլյոմա, կարմիր քամի, էրիթրազմա, բազմաձև արտաքիրտային (էքսուդատիվ) էրիթեմա, հասարակ քիթ-շրթունքային որքին (հերպես), հպավարակիչ մոլյուսկ	Ձորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Ձորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ

	- պաթումիմիա	- քուս, ոջլոտություն, լեյշմանիոզ, ֆլեբոտոդերմիա - պաթումիմիա		
93.	Մաշկի, դրա հավելումների և լորձաթաղանթների սնկային հիվանդություններ՝ դերմատոֆիթիաներ, կանդիդոզ, տրիխոմիկոզներ, օնիխոմիկոզներ, խորը միկոզներ	94. Մաշկի, դրա հավելումների և լորձաթաղանթների սնկային հիվանդություններ՝ դերմատոֆիթիաներ, կանդիդոզ, տրիխոմիկոզներ, օնիխոմիկոզներ, խորը միկոզներ	Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Զորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ

ՄԵՌԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

94.	- Մուր և քրոնիկական միզուկաբորբեր (անկախ էթիոլոգիայից), արտաքին սեռական օրգանների, հետանցքային շրջանի, ըմպանի վիրուսային և մանրէային ախտահարումներ՝ հերպես, սրածայր կոնդիլոմա (սեռական գորտնուկ), շանկրանման պիոդերմիա - Սեռավարակների բարդացման հետևանքով առաջացած բալանիտ, բալանոպոստիտ, շագանակագեղձի, ամորձու և մակամորձու բորբոքումներ	95. Մուր և քրոնիկական միզուկաբորբեր (անկախ էթիոլոգիայից), արտաքին սեռական օրգանների, հետանցքային շրջանի, ըմպանի վիրուսային և մանրէային ախտահարումներ՝ հերպես, սրածայր կոնդիլոմա (սեռական գորտնուկ), շանկրանման պիոդերմիա - Սեռավարակների բարդացման հետևանքով առաջացած բալանիտ, բալանոպոստիտ, շագանակագեղձի, ամորձու և մակամորձու բորբոքումներ	Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ	Զորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ զինվորական պարտականություններից ազատում կամ արձակուրդ
-----	--	--	---	--

95.	Սիֆիլիս	96. Սիֆիլիս		
-----	---------	-------------	--	--

	ա) առաջնային, երկրորդային, գաղտնի	ա) երրորդային, ուշացած գաղտնի, բնածին, նյարդային և ընդերային, շճակայուն (սեռորեզիստենտ) սիֆիլիս	Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողներին՝ բուժում	Զորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
--	-----------------------------------	---	---	--

	բ) երրորդային, ուշացած, բնածին, նյարդային և ընդերային, շիճուկակակոյուն /սերոռեզիստենտ/ սիֆիլիս	բ) առաջնային, երկրորդային, վաղ գաղտնի	Զորակոչիկներին՝ տարկետում, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Զորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողներին՝ բուժում
--	--	---------------------------------------	--	--

ԿԱՆԱՆՑ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

101.	Կանաչի սեռական օրգանների իջեցում	102 ՀՈԴՎԱԾ	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ	Ջորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
104.	Արգանդի, փողերի, ձվարանների, կոնքի որովայնամզի և բջջանքի սուր բորբոքային հիվանդություններ	104 ՀՈԴՎԱԾ	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պատերազմական ժամանակ՝ տարկետում	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, զինծառայողները՝ պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության պատերազմական ժամանակ
105.	Արգանդի վզիկի էրոզիա, ցերվիցիտներ, էնդոցերվիցիտներ և դրանց գուգակցում	105 ՀՈԴՎԱԾ	Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պատերազմական ժամանակ՝ տարկետում	Ժամանակավորապես պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Քայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

20 հուլիսի 2012 թ.

Հարգելի պարոն Օհանյան,

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունն իրականացրել է ՀՀ զինված ուժերում բժշկական ծառայության հետ կապված զորակոչիկների եւ զինծառայողների մարդու իրավունքների խախտումների վիճակի ուսումնասիրություն:

Ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են գեկույցի ձևով, որը ներկայացնում ենք ՀՀ պաշտպանության նախարարի քննարկմանը՝ մեկնաբանություններ եւ առաջարկություններ ստանալու նպատակով: Զեկույցը, ինչպես նաեւ Ձեր մեկնաբանություններն ու առաջարկությունները կներկայացվեն հանրային լսումների ընթացքում:

Խնդրում եմ Ձեր մեկնաբանությունները և առաջարկությունները ներկայացնել մինչև 2012 թվականի հուլիսի 29-ը սույն նամակում նշված հասցեներով:

Շնորհակալություն համագործակցության համար:


Հարգանքներով՝

կազմակերպության նախագահ

կատարող՝ Ա. Մադիկյան

էլ. փոստ՝ asadikyan@hcav.am

հեռախոս՝ 093 339 441



Արթուր Մաքունց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« 14 » 08 2012թ.
ՁԴԲ 510-ՈՁ - 419

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
«Վանաձորի գրասենյակ» կազմակերպության
նախագահ Ա. ՍԱԲՈՒՆՅԻՆ

Հարգելի պարոն Սաբունց

2012 թվականի հուլիսի 20-ին ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված Ձեր գրության առնչությամբ հայտնում եմ, որ ՀՀ վարչապետի 2012 թվականի մայիսի 24-ի 457-Ա որոշման համաձայն լրամշակման փուլում է ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի N 175 հրամանը, որի ընթացքում հաշվի կառնվեն նաև Ձեր կողմից ներկայացված առաջարկությունները:

ՀՀ ՊՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ,
(քիժ 2-րդ դասի պետական խորհրդական

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ